№ 69 ՀԻՆԳՇԱԲԹԻ ՄԱՐՏԻ 30

1906

ԵՐԵՍՈՒՆՉՈՐՍԵՐՈՐԴ ՏԱՐԻ

ՄՇԱԿ

ՀԻՆԳՇԱԲԹԻ ՄԱՐՏԻ 30 № 69

Տարեկան գինը 10 րուբլի. կէս տարվանը 6 րուբլի. առանձին համարները 5 կոպէկով.

Թիֆլիսում գրվում են խմբագրատան մէջ.

Մեր հասցէն. Тифлисъ, редакція «Мшакъ». կամ Tiflis, Rédaction «Mschak».

Տէլէֆօն № 253.

Խմբագրութիւնը բաց է առաւօտեան 10—2 ժամ (բացի կիրակի և տօն օր'երից)

Յայտարարութիւն ընդունվում է ամէն լեզուով.

Յայտարարութիւնների համար վճարում են իւրաքանչիւր տողատեղին 10 կոպէկ.

Տէլէֆօն № 253.

ՀԻՄՆԱԴԻՐ ԳՐԻԳՈՐ ԱՐԾՐՈՒՆԻ

ԲԱՑՎԱԾ Է ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆ

ՄՇԱԿ

ՔԱՂԱՔԱԿԱՆ ԵՒ ԳՐԱԿԱՆԱԿԱՆ ԼՐԱԳԻՐ

ՆԵՐԿԱՅ 1906 ԹՒԱԿԱՆԻ ՀԱՄԱՐ

(34-ՐԴ ՏԱՐԻ)

ԲԱԺԱՆՈՐԴԱԳԻՆԸ. «Մշակի» տարեկան գինը 10 րուբլի է, տասն և մէկ ամսվանը նոյնպէս 10 ր., տասն ամսվանը՝ 9 ր., ինն ամսվանը՝ 8 ր., 8 ամսվանը՝ 7 ր., եօթ և վեց ամսվանը՝ 6 ր., հինգ ամսվանը՝ 5 ր., չորս ամսվանը՝ 4 ր., երեք ամսվանը՝ 3 ր., երկու ամսվանը՝ 2 ր. և մի ամսվանը՝ 1 րուբլի: Մարտի 1-ից մինչև 1 յունիսի 2 րուբլի:

ԱՐՏԱՍԱՀՄԱՆԵԱՆ ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆ. Ամերիկայի բաժանորդները պէտք է վճարեն տարեկան 6 դօլլար. Եւրոպայի բաժանորդները՝ 30 ֆրանկ. Պարսկաստանի բաժանորդները՝ 10 րուբլի:

«Մշակին» գրվել կարելի է ԽՄԲԱԳՐԱՏԱՆԸ. (Բազարնայա և Բարօնսկայա փողոցների անկիւն): Ստորագրվել կարելի է միայն ամսի 1-ից:

Կայսրութեան ուրիշ քաղաքներից «ՄՇԱԿԻՆ» գրվելու համար և առհասարակ նամակներ և ծրարներ ուղարկելիս, պէտք է դիմել հետևեալ հասցէով: ТИФЛИСЪ, Редакція „МШАКЪ" իսկ արտասահմանից՝ TIFLIS, Rédaction du journal «MSCHAK».

Յայտարարութիւններ ընդունվում են բոլոր լեզուներով:

ԱՊԱՌԻԿ ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆ ՉԷ ԸՆԴՈՒՆՎՈՒՄ

ԱՆՆԱ ՍԱՐԳՍԵԱՆ ԴԱՒԹԵԱՆՑԻ

մահվան եօթերորդ օրը, հինգշաբթի, մարտի 30-ին, Ջգրաշէնի ս. Աւետեաց եկեղեցում կը կատարվի պատարագ և հոգեհանգիստ, որի մասին յայտնում են ազգականներին և ծանօթներին վաղամեռ հանգուցեալի վշտացեալ մայր Նազլու Դօլուխանեանցը իր որդու և դուստրների հետ: Պատարագի սկիզբն է ցերեկվայ 10 և կէս ժամին

2—2

ԱՆՆԱ ՍԱՐԳՍԵԱՆ ԴԱՒԹԵԱՆՑԻ

մահվան եօթերորդ օրը, հինգշաբթի, մարտի 30-ին, Ջգրաշէնի ս. Աւետեաց եկեղեցում կը կատարվի պատարագ և հոգեհանգիստ, որի մասին յայտնում են ազգականներին և ծանօթներին վաղամեռ հանգուցեալի վշտացեալ քոյր Նաժէժդա և փեսայ Առաքել Վարդապետեանցները, և հանգուցեալի որբացած որդիք Սարգիս և Միքայել Դաւթեանցները: Պատարագի սկիզբն է ցերեկվայ 10 և կէս ժամին

2—2

Պատիւ ունիմ ընդհանուր ուշադրութեան հասցնել, որ մարտի 28-ից բացվում է

ՑԱՏՈՒԿ ԱՌԱՋՆԱԿԱՐԳ

ԿՕԼԲԱՍԻ ԽԱՆՈՒԹ

Գօլօվինսկի Պրօսպէկտի վրա, տուն № 10, Կրուժօկի տան տակին

ВАРШАВСКАЯ, КОЛБАСНАЯ

WISŁA

Միթերքներ ստացվում են ամէն մի ժամ սեփական արհեստանոցից և պատրաստվում են փորձառու վարպետների հսկողութեան տակ:

Ինչպէս արհեստանոցում նոյնպէս և խանութում նախատեսված են ժամանակակից առողջապահութեան բոլոր պահանջները:

Յարգանքով՝ Վարշավսկայա կոլբասնայա ՎԻՍԼԱ: (ա օ) 3—3

ԲԺՇԿԱՊԵՏ

ԳՐԻԳՈՐԻ ԵՕՍԻՖՕՎԻՉ

ԳՈՒՐԳԷՆՕՎ

Խարկովի համալսարանի մանկաբարձական և գինէկօլօգիական կլինիկայի նախկին օրդինատոր (պրօֆէսօր Տօլօչինովի) ընդունում է մանկաբարձական և կանանց հիւանդութիւններ ունեցող հիւանդներին: Առաւօտեան 10—12 ժ. և երեկոյեան 5—7 ժամը: Գօլօվինսկի № 12, տուն Մղիվանիի, Արտիստական ընկերութեան հանդէպ:

(չ.հ.ու.) (առ) 6—10

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

Բարեխիղճ վերաբերմունք. Վերջին տեղեկութիւններ. Դէպքերը Վրաստանում. Քութայիսի ազնուականութեան պատգամաւորները Փոխարքայի մօտ. Ընտրութիւնների կատարումը. Բոլորս Կովկասի զաւակներ ենք. Միջնորդ յանձնաժողովների անհրաժեշտութիւնը. Բարենորոգումներ հայ եկեղեցու մէջ. Դատաստանական դահլիճից. Ուսումնարանական Նամակ Ալէքսանդրօպօլից, Նամակներ խմբագրութեան. Վերջին հեռագիր. Ներքին լուրեր. Ռուսիկանական տեղեկութիւններ.—ԱՐՏԱՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ. Իտալօ-գերմանական պարը Տրիպօլի շուրջը. Արտաքին լուրեր.—ՀԵՌԱԳԻՐՆԵՐ.—ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ.

ԲԱՐԵԽԻՂՃ ՎԵՐԱԲԵՐՄՈՒՆՔ

I

«Մշա'կի» երէկվայ համարում մենք հաղորդեցինք, որ մի յատուկ հայ պատգամաւորութիւն ներկայացաւ Կովկասեան Փոխարքային և զեկուցեց Շուշու գաւառի և առհասարակ Գանձակի նահանգի շրջանում կատարվող քստմնելի դէպքերի մասին:

Պատգամաւորները տուին իրանց տրամադրութեան տակ եղած բոլոր տեղեկութիւնները և մատնեցին, որ կարևոր է շուտափոյթ քննութիւն կատարել եղած չարագործութիւնները երևան հանելու համար և անմիջապէս կարգադրութիւն անել դադարեցնելու գիւղերի ռմբակոծութիւնը և գիւղացիներին տանջելը:

Փոխարքան, ինչպէս յայտնի է, խոստացաւ միջոցներ ձեռք առնել պարզելու եղածը և պատասխանատուութեան ենթարկել մեղաւոր պաշտօնեաներին:

Առաջիկայ շաբաթները ցոյց կը տան թէ ինչ արդիւնքներ կը տայ քննութիւնը և ինչ պատասխանատուութեան կը կոչվեն գիւղեր աւերողները:

II

Աչքի առաջ ունենալով, որ քննութիւնը պէտք է պարզէ իրերի դրութիւնը, անկասկած, ցանկալի է. որ այդ քննութիւնը կատարվէր ամենամեծ անաչառութեամբ և կատարեալ բարեխղճութեամբ:

Պաշտօնեաներին ենթարկված գիւղացիները պէտք է արդարութեամբ և շիտակութեամբ պատմեն իրանց գլխի եկածը, ոչինչ չը թագցնելով, ոչինչ չը կեղծելով, որպէս զի պարզվի ճշմարտութիւնը թէ քննիչ ատեանի և թէ մեր հասարակութեան համար:

Թող ոչ ոք չը քաշվի յայտնելու ճշմարտութիւնը և վկայ լինելու այն բաներին, ինչ որ տեսել է: Ճշմարտութիւնը թագցնելը այժմ, երբ բողոք է յարուցված, գանգատ է արված և քննութիւն է նշանակված, կը նշանակէ թաղել արդար դատը և անվստահութիւն ներշնչել և դէպի այն գանգատները, որոնք տեղի կունենան այսուհետև:

III

Սակայն մեր առաջ դրված է և մի ուրիշ պարտականութիւն:

Մենք, որ հասցնում ենք գանգատները հասարակական դատաստանին և վարչական ատեաններին, պէտք է մի բանի մէջ հաստատ համոզված լինենք, այն է, թէ մեր ստացած տեղեկութիւնները հաւաստի են, ճշգրիտ, անհերքելի, և թէ նրա'նք կը դիմանան ամէն մի քննութեան և հետախուզութեան:

Շատ անգամ ենք մենք յիշեցրել, այսօր նորից կրկնում ենք մեր աշխատակիցներին, որ մենք կը ցանկանայինք, որ նրանց հաղորդած տեղեկութիւնները իրանց ստոյգ էութեամբ կարող լինէին իրանց պաշտպանել և մենք կարող լինէինք համարձակ կերպով յենվել նրանց վրա զանազան դիմումներ անելու և վէճեր մղելու ժամանակ:

Մենք շատ անգամ կարողացել ենք պատւով դուրս գալ այդպիսի հանգամանքներում և կը ցանկանանք, որ այսուհետև աւելի եւս վստահութեամբ կարողանանք պաշտպան լինել նրանց հաղորդագրութիւններին:

VI

Եթէ մամուլը ույժ է, ցանկալի է, որ նրա վարկը կասկածի չենթարկվի, որ նրա տուած տեղեկութիւնները համարվեն ստոյգ և վստահութեան արժանի:

Անգլիական խոշոր լրագիրների ույժերից մէկը նրանց տուած տեղեկութիւնների լրջութիւնը և արժանահաւատութիւնն է: Երբ որ լրագրի շիտակութեան և նրա տուած տեղեկութիւններին վստահութեամբ է վերաբերվում թէ հասարակութիւնը և թէ վարչութիւնը, այն ժամանակ մամուլի օրգանը դառնում է իսկապէս մի հեղինակաւոր ձայն, որ ստիպում է մարդկանց գնահատել նրա հաղորդած ամէն մի տեղեկութիւնը:

Եւ որքան աւելի կաջողվի մեզ իրագործելու շիտակ, վստահելի և լուրջ օրգանի գաղափարը, այնքան աւելի ույժ ստացած կը լինի մամուլի ձայնը:

Ա. Քալանթար

ՎԵՐՋԻՆ ՏԵՂԵԿՈՒԹԻՒՆՆԵՐ

Շուշւից, 28 մարտի.

Գաւառում լիակատար հանգստութիւն է: Գնդապետ Զօլօտարեւը մի հարիւրակ կօզակներով, մի զունդ զինուորներով և թնդանօթներով շրջագայում է գիւղերը, հրաւիրելով բնակիչներին խաղաղ գործունէութեան: Շատերը տալիս են իրանց զէնքերը:

—

Մեզ հաղորդում են, որ Շուշու հայաբնակները յատուկ հեռագրով դիմել են Փոխարքայի ամուսնու կոմսուհի Վօրոնցով-Դաշկովային, խնդրելով պաշտպանութիւն իրանց գիւղական քոյրերի համար, որոնք ենթարկված են զրկանքների և անարգանքների:

—

Գանձակի նահանգի աղէտաւորների վիճակը և կարիքները ուսումնասիրելու և օգնութեան միջոցներ մշակելու նպատակով Թիֆլիսից ուղարկվեցին Գանձակ ագրօնօմներ Երուանդ Սարգսեան և Արսէն Քալանթար: Նրանք ուղարկված են Թիֆլիսի նպաստամատոյց յանձնաժողովի կողմից: Մասնագէտները պէտք է այցելեն վնասված տեղերը և ներկայացնեն իրանց զեկուցագրերը յանձնաժողովին:

—

Հայ բժիշկներից մինչև այժմ ոչ ոք արձագանք չը տուեց նպաստամատոյց յանձնաժողովի հրաւէրին գնալու վնասված գիւղերը: Յանձնաժողովը մտադիր է դիմել օտարազգի բժիշկների, տալով նրանց օգնական և թարգման հայ ուսանողներ:

—

Մեզ հաղորդում են, որ Շուշու գաւառի Ղուզէյ և Ճարտար գիւղի բնակիչները հեռագրով դիմել են կովկասեան Փոխարքային, զեկուցանելով իրանց գիւղերին հասած սարսափելի աղէտները:

—

Բագուից մեզ հաղորդում են, որ այնտեղ կեանքը մտել է իր սովորական ընթացքի մէջ և հայերի և Թուրքերի յարաբերութիւնները բաւականաչափ կանոնաւորված են: Սակայն մթնոլորտը լիակատար կերպով դեռ հանգստացնող չէ: Նորերս քիչ մնաց, որ ռուս հայրենասէրները մի գրօսանք կատարէին քաղաքի փողոցներում: Այդ գրօսանքի լուրը իսկոյն երկիւղով լցրեց բոլորի սրտերը, որովհետև ամբոխի մէջ գտնվող մութ ույժերը հնարաւորութիւն ստացած կը լինէին սանձարձակութիւններ անել և դրանով սկիզբ դնել մեծ անկարգութիւնների և ընդհարումների: Ոչինչ չեղաւ, բայց ոչ ոք վստահ չէ, որ վաղը մի օր և է նոր այդ տեսակ փորձ տեղի չի ունենայ:

—

Գանձակի գաւառի Թաթարլի Թուրք գիւղի աւազակային մի խումբ մարտի 15-ին յարձակվեց Բաղա գիւղի վրա: Այդ աւազակախմբին նկատում է զինուորական այն վաշտը, որ գործում էր այդ գաւառում փոխ-գնդապետ Ալլահվերդովի առաջնորդութեամբ: Վերջիններս հրացաններ են արձակում զօրքի վրա: Մարդկային զոհ չէ եղել: Աւազակներից երեք հոգի բռնված են և բանտարկված: Թնդանօթային ռումբերով ոչնչացրված են Թաթարլու գիւղի այն Թուրքերի տները, որոնք մասնակցել էին աւազակային արշաւանքին:

(Կ.)

—

Շուշու գաւառի դէպքերի մասին «Кавказъ» լրագիրը հրատարակած է հետևեալը:

«Շուշի: Այստեղ գտնվող Թռուցիկ խումբը փոխ-գնդապետ Վէվէրնի առաջնորդութեամբ մարտի 19-ին և 20-ին, թնդանօթաձգութեամբ պատժեց հայկական Թաղ և Տող գիւղերը այն պատճառով, որ այդ գիւղերի բնակիչները յունվարի 15-ին յարձակվել էին Թուրքական Ղաջար գիւղի վրա և հրացան պարպել կօզակների վրա: Թաղ գիւղի վրա արձակված է վեց ռումբ: Այնուհետև բնակիչներից վերցվեց 2030 րուբլի, 9 բերդան, 11 առեղնաւոր հրացաններ, փամուշտներ, փչացրած է մնացել կենդանիների մի մասը:

Տող գիւղի վրա արձակվեց 20 ռումբ և վերցվեց 900 րուբլի, 10 բերդան, 14 չախմախի հրացան: Այս գիւղի խուզարկութեան ժամանակ գտնվեց մեծ քանակութեամբ վառօդ, որով օդը ցնդեցրվեց կօմիտէտի անդամի տունը, որտեղ գտնվեցին փամփուշտներ: Սուրալըղ հայ գիւղում գտնվեցին 1 բերդան, 1 առեղնաւոր և մի քանի չախմախի հրացաններ: Մարդկային զոհեր ռմբակոծութեան ժամանակ տեղի չունեցան:

—

Կովկասեան և Անդրկովկասեան մուսուլմանները Մեքքայից վերադառնալիս մակասառում մեծ քանակութեամբ զէնքեր են գնել:

«Հ. Գ.»

—

Մասնաւոր տեղեկութիւններ են ստացվել Թիֆլիսում, որ Երզրումում ներկայումս ընդհանուր գործադուլ է յայտարարված: Բոլոր խանութները փակված են: Միայն հաց են վաճառում: Ազգաբնակութիւնը պահանջում է հարկերը թեթևացնել:

«К. М.»

—

Շուլավերից մարտի 28-ին

Թիֆլիսի զինուորական գեներալ նահանգապետի օգնական գնդապետ Զօլօտարեւը գաւառապետի ուղեկցութեամբ ամսիս 25-ին երկու հարիւրակ կօզակներով, 150 հետևակ զօրքով ու երկու թնդանօթներով մտաւ մեր գիւղը: Ժողովուրդը նրան դիմաւորեց գիւղի ծայրին: Տանուտէր պ. Վախտանգ Մեհրաբեան աղ ու հաց առաջարկելով ողջունեց նրա գալուստը, աւելացնելով, որ «Շուլավերի հասարակութիւնը տասն տարի առաջ Շուլավերում ձեր ծառայութեան միջոցին ձեզ ճանաչում էր որպէս բարեխիղճ ու անաչառ մարդ, ուստի լսելով, որ դուք էք մեր գաւառում նշանակված նահանգապետի օգնական, շատ ուրախացաւ»: Գնդապետը պատասխանեց. «Ես համոզված եմ, որ շուլավերցիք հաւատարիմ հպատակներ են, բայց անհրաժեշտ է, որ նրանք այդ ցոյց տային գործով ու աշխատէին հաշտ ապրելու Թուրքերի հետ, ցոյց տային յանցաւորներին, վերադարձնէին զէնքերը ու զբաղվէին խաղաղ աշխատանքներով»: Տանուտէրը պատասխանեց. «Հայ ժողովուրդը միշտ էլ հաւատարիմ է եղել իր Թագաւորին, հաւատարիմ էլ կը մնայ, իսկ ինչ վերաբերում է Թուրքերին՝ շուլավերցիք նրանց հետ թշնամութիւն չունեն ու ոչ մի վնաս էլ չեն հասցրել նրանց հետևապէս յանցաւորներ էլ չունեն»:

Դրանից յետոյ զօրքը տեղաւորվեց յատկացրված տեղերում, իսկ նահանգապետի օգնականը գաւառապետի մօտ: Երկրորդ օրը Զօլօտարեւի հրամանով մեր տանուտէրը համագումարի հրաւիրեց ժողովրդին, ուր եկան ինքը ու գաւառապետը: Գնդապետը դիմեց ժողովրդին հետևեալ ճառով. «Բօրչալուի գաւառում զինուորական դրութիւն է յայտարարված գլխաւորապէս շուլավերցիների օգտին, որովհետև նրանք շրջապատված լինելով խիտ Թուրք ազգաբնակութեամբ, անհրաժեշտ են լայն իրաւունքներ նրանց պաշտպանելու համար. Թէև, պարոններ, մեղաւորը դուք հայերդ էք, որովհետև պարտքի տակ կորցրել էք Թուրքերին ու ծանր տոկոսներով ճնշել այդ խեղճ ժողովրդին: Աւելի մեղաւոր է հայ երիտասարդութիւնը, որը ամէն մի առոր միջոց չէ խնայում մի նոր առանձին Թագաւորութիւն հիմնելու Կովկասում, նա չէ խնայում նոյն իսկ կօզակի կեանքը, նրանց էլ բօմբերով է սպանում: Հայ երիտասարդները անպատիժ կերպով, բոլոր միջոցներով խաղում են ուրիշի սեփականութեան հետ, նրանցից նոր նոր հարկեր են պահանջում: Հաւատացէք գիւղացիներ, որ հայը չէ կարող այս դրութեան մէջ երկար դիմանալ, նրան հանգիստ կեանք է հարկաւոր: Հայ երիտասարդութիւնը աշխատեց Թուրքերին միացնել հայերի հետ, որ մի նոր Թագաւորութիւն հիմնեն, բայց Թուրքերը չը համաձայնելով՝ սկսեցին կոտորել ձեզ: Ձեր շահերը, պարոններ, պահանջում են հաշտ ապրել այդ աղքատ ու մութ ժողովրդի հետ: Դուք վաճառականներ էք, իսկ Թուրքերը խաշնարած. Նրանք իրանց արդիւնաբերութիւնը տալիս են ձեզ չնչին գնով, ուստի նրանք աշխատում են ձեզ համար: Թէև Թուրքերը անպատիժ չեն մնայ, բայց ես չեմ եկել նրանց աղքատացնելու: Ցոյց տուէք, որ Թուրքը մի տեղ ռումբ նետած լինէր ռուսի վրա: Խելքի եկէք, գիւղացիներ, միք լսի ձեր ջահէլներին, տուէք մեր ձեռքը վնասակար երիտասարդներին՝ պատժենք, որ դուք էլ հանգստանաք, տուէք ձեր զէնքերը, առանց իրաւունքի միք պահի նրանց, և մանաւանդ տուէք ձեր ռումբերը, մենք ոչնչացնենք նրանց, որովհետև նրանցից ձեր տներում դժբաղդութիւն կը պատահի, իսկ եթէ մենք կը գտնենք, դուք աւելի կը տուժէք, բանտի պատերը միք սիրի ու միք ցանկանայ տեսնել»:

Տանուտէր պ. Մեհրաբեանը թարգմանելով գնդապետի ճառը, դիմեց ժողովրդին. «ցանկանո՞ւմ էք ու իրաւունք տալի՞ս էք ինձ մի քանի խօսք ասելու պ. գնդապետին»: Ժողովուրդը աղաղակեց. «այո, իրաւունք ենք տալիս, խնդրում ենք, խօսեցէք»:

«Պ. գնդապետ. Շուլավերի հասարակութիւնը շատ շնորհակալ է, որ եկել էք մեզ պաշտպանելու ու Թուրքերին էլ չաղքատացնելու, բայց մեր հասարակութիւնը լսելով ձեր խրատները, չէ կարող համաձայնվել ձեր մի քանի հայեացքների ու կարծիքների հետ: Հայ ժողովուրդը երբէք չէ մտածել Կովկասում, ու ինքը առանց այն էլ ազգաբնակութեան փոքրամասնութիւնն է կազմում, Պարսկաստանի և Թիւրքիայի մէջտեղը իրան Թագաւորութիւնը հիմնել, այդ ուղղակի առասպել է ու զրպարտութիւն. Հայը շատ լաւ գիտէ, որ բարբարոս Թուրքերի մէջ առանց ռուս Թագաւորի հովանաւորութեան անհնարին է ապրել ու կուլտուրապէս զարգանալ, առաջադիմել: Մեղաւորը հայերը չեն, այլ Թուրքերը, որոնք նախամտածած ծրագրով սկսեցին առաջինը յարձակվել ու կոտորել նրանց. դրա գլխաւոր յանցաւորները ադմինիստրացիայի մի քանի ներկայացուցիչներն են, որոնք իր ժամանակին միջոցների չը դիմեցին այդ հրդեհը հանգցնելու, որպէս զի նա մեծանալով չը բռնկէր ամբողջ Անդրկովկասը: Իսկ եթէ քրիստոնեայ տէրութեան մէջ մահմեդականները աւերում ու կողոպտում են հայի ունեցածը, այրում նրա եկեղեցիները, պղծում նրա սրբութիւնները և ստիպում քրիստոնէին մահմեդականութիւն ընդունել, դրա մէջ էլ պէտք է և մեղաւոր ճանաչել մուսուլման բէգերին, աղալարներին ու խաներին, որոնց մեծամասնութեան երակների մէջ ժառանգաբար արեան հետ մտած է բարբարոսութեան, աւազակութեան ու Թալանի բնազդը ու տենչանքը:

Այդ կարելի է միշտ էլ հաստատել պատմական ու նոր հարուստ փաստերով: Բէգ, աղա, խան տիտղոսները երբէք Թուրքերի սրտերի մէջ չեն պատուաստել բարին, գեղեցիկը ու ազնիւը, այլ պատրաստել են բարբարոսութիւն, Թալան, կեղծաւորութիւն, շողոքորթութիւն և կաշառելու ընդունակութիւն: Կան մարդիկ, որոնք այդ բարբարոսութիւնը վերագրում են նրանց ագիտութեան, ճիշտ է, գիտութիւնը ընդունակ է բուժելու Թուրքերի այդ ախտերը, բայց երբեմն գիտութիւնը անզօր է բուժելու մարդկանց այն վատ սովորութիւնները, որ նրանք ստացել են ժառանգաբար արեան հետ. ուստի այդ վարակիչ ախտը, որը համաճարակի բնաւորութիւն է ընդունել, անհրաժեշտ է դրան բժշկելու համար երկար ժամանակ գիտութեան հետ և խիստ օրէնք ու բարեխիղճ իրագործողներ այդ օրէնքի: Սխալ է այն կարծիքը, որ մեզ Թուրքերը կոտորում են նրա համար, որովհետև առիթ են տալիս մեր երիտասարդները. ընդհակառակը, հայ ազգը մեղաւոր չէ, յանցանք էլ չէ, եթէ մի երկու տասնեակ սօցիալ-դեմօկրատ կամ սօցիալ-յեղափոխականներ է տուել, եթէ դրա համար են կոտորում մեզ, ապա ինչո՞ւ չեն կոտորում ռուս ժողովրդին. նրանք հարիւր հազար անգամ շատ ունեն ներկայ ռեժիմի դէմ կռւողներ: Մենք միանգամայն չգիտենք թէ ինչով է մեղաւոր հայ քրիստոնեա ժողովուրդը. երբեւից է նա ապստամբել է ռուս կառավարութեան դէմ, մինչ Մօսկվայում բարիկադների ետևից ռուս զօրքի դէմ կռւում էին հայերը: Իսկ ինչ վերաբերում է նրան, որ մենք մեր զէնքերը յանձնենք, հաւատացէք, որ դրանով մեզ՝ անմեղ շուլաւէրցիներիս էլ մեղաւոր էք ճանաչում: Մենք խնդրում ենք իւրաքանչիւրին պատժէք իր յանցանքի համեմատ:

Հայի զինվելը երբէք վնաս չէ ռուս կառավարութեան, Ռուսաստանի պատւի համար ռուս զինուորների շարքերում զոհվողներ կը լինեն կրկին Լօրիս-Մելիքօվի, Շելկօվնիկօվի, Տէր-Ղուկասօվի և Լազարեվի ժառանգ հայերը, որոնց վրա դժբաղդաբար շատ չինօվնիկներ սատանի սխալ կարծիք ունեն»:

Գնդապետը լսելով պ. Մեհրաբեանի ճառը, խոժոռ նկատեց. «Դուք իրաւունք չունէք կառավարութեան մեղադրելու, իսկ եթէ Մօսկվայում կամ ռուսների շարքերի դէմ կռւել են ռուսները, դրանից չը պէտք զարմանալ. չը կայ ընտանիք, ուր չը լինեն ապուշներ»: Տանուտէրը պատասխանեց. «Ո'չ, պ. գնդապետ, մենք չենք մեղադրում երբէք կառավարութեանը, մեղադրում ենք այն չինօվնիկներին, որոնք պատճառ դարձան այս կոտորածների ու խիստ, արդար միջոցների չը դիմեցին: Կովկասն էլ այդ մեծ ընտանիք Ռուսաստանի անբաժան մի անկիւնն է, հետևապէս ձեր չեշտած ապուշները կարող են և այստեղ էլ գտնվել, ուստի դրա համար էլ մի ազգութիւն մեղադրել շատ անարդար կը լինէր»:

Ապա գնդապետը պահանջեց խօսել միայն մեր գաւառի վերաբերեալ: Պ. Մեհրաբեանը ասաց. «Մենք շատ ուրախ ենք, հէնց այդ էլ անհրաժեշտ է. ահա ներկայ է գաւառապետը, Թող ցոյց տայ մի դէպք, որ շուլաւէրցիք մի Թուրքի քիթ արնած լինեն կամ մի Թուրքի հաւ գողացած. իսկ արդէն ապացուցված է, որ Թուրք բէգերի ու աղալարների առաջնորդութեամբ ոչնչացրին մեր գաւառի երեք միլիոնի արժողութեամբ գեղեցիկ գիւղատնտեսական կուլտուրան» և այլն: Ապա պ. Մեհրաբեանը մի առ մի Թուեց և այն վնասները, որը հասցրել են Թուրքերը շուլաւէրցիներին:

Ահա այսպէս վերջանալուց յետոյ այդ համագումարը, միւս օրը Զօլօտարեւը և գաւառապետը մի հարիւրակ կօզակով ու մի Թնդանօթով գնացին Թաքալու՝ հոչակաւոր Եղիզարօֆների գիւղը:

Տեսնենք և սպասենք հետևանքին:

Վաչագան

—

Երէկ, երեկոյեան ուշ ստացանք Շուշու առաջնորդ Աշոտ եպիսկոպոսից նոր հեռագիր: Նա զետեղված է «Մշակի» ներկայ համարի երրորդ երեսում:

ԴԷՊՔԵՐԸ ՎՐԱՍՏԱՆՈՒՄ

Կվիրիլա: Այստեղի լրտեսներից չորս հոգի կատարում են պատժողների դերը: Հէնց որ զօրքը մտնի գիւղը, այս լրտես պարոնների էկսպեդիցիան է առաջնորդում նրանց, ցոյց են տալիս այն տները, ուր ապրում են կասկածելի մարդիկ, որոնց խուզարկելուց յետոյ, կրակ են տալիս: Լրտեսներից մէկը, օրինակի համար, Կ. Ն-ձէն, կօզակի շ'րեր հագած մտն էր գալիս պատժողների հետ միասին և մատնացոյց էր անում իր ընկերներին: Այս պարոնը և էլի մի ուրիշը Ս. Գ-ձէն պաշտօնական լրտեսներ են, իրանց գլուխը չեն թագցնում և համարձակ կերպով գործում են. առաջինը գործելու ասպարէզ ընտրել է գիւղերը, իսկ երկրորդը Թիֆլիս քաղաքը: Գ-ձէն, սկսած փետրվարի 15-ից շաբաթը մէկ, կամ երկու անգամ ստրաժնիկների հետ միասին մտն է գալիս գաւառը, փնտռում է այն մարդկանց, որոնք գործում էին գաւառում, բայց հիմա անյայտացել են. Նրա ցուցմունքի համաձայն մի քանիսին ձերբակալում են, իսկ մի քանիսին սպանում են. օրինակ Ծեվա գիւղում սպանեցին Գրիշա Գաչեչիլաձէին և ձերբակալեցին նրա հօրը, Էրաստին:

Ահա, այսպէս են վարվում այս լրտես պարոնները, և չեն մտածում, թէ ինչ է սպասում նրանց երկրորդ օրը: Գաւառապետը համարեա ամէն օր զեկուցում է ուղարկում, որ գաւառում հանգստութիւն է տիրում և սօցիալ-դեմօկրատները այլ ևս չեն երևում: Չը նայելով որ տեղական ադմինիստրացիան շատ խիստ է վերաբերվում, այնուամենայնիւ այս վերջին ժամանակներում Թերթեր շատ են տարածվում և ժողովուրդն էլ ուրիշ ձևով սկսեց խօսել: Հաւանական է, որ ադմինիստրացիան հիմա ուրիշ զեկուցումներ կուղարկի: Գարնան առաջին ամիսը վերջանալու վրա է, բայց գիւղացիները դեռ ոչ մի տեղ չեն սկսել իրանց աշխատանքը, կամ թէ ինչպէս սկսեն, երբ ամէն րոպէ սպասում են զօրքին և գալթելու պատրաստութիւն են տեսնում: Պետական Դումայի ընտրութիւնը դեռ չէ կայացել:

(Էվս)

—

Արևմտեան Վրաստանից եկողները հաղորդում են, որ Բաչինսկի գաւառում երկրորդ անգամ զօրքերը յարձակվեցին և հրդեհեցին Պատառա Օնի, Արօնսեթի և Բաջի գիւղերը:

ՔՈՒԹԱՅԻՍԻ ԱԶՆՈՒԱԿԱՆՈՒԹԵԱՆ ՊԱՏԳԱՄԱՒՈՐՆԵՐԸ ՓՈԽԱՐՔԱՅԻ ՄՕՏ

Մարտի 19-ին ներկայացան Փոխարքային Քութայիսի ազնուականութեան կողմից ուղարկած երեք պատգամաւորները՝ իշ. Ս. Դ. Ծերեթելի, իշ. Դ. Օ. Նիժերաձէ, և իշ. Օտ. Դադեշկելեանի, որոնք մի գրաւոր դիմումով շնորհակալութիւն յայտնեցին Փոխարքային, Պետական Դումային Կովկաս եւս մասնակից անելու և Վրաստանի ու վրաց ժողովրդի վրա «քաղաքացիական և քաղաքական ազատութեան անձեռնմխելի հիմունքները» տարածելու համար:

Յայտնելով այն կարծիքը, որ վերջին ժամանակներս, Ռուսաստանի հետ միաժամանակ, կատարված «անցքերը» արգելք հանդիսացան

Փոխարքայի բարի մտադրութիւնների իրագործմանը, նրանք այնուամենայնիւ յոյս յայտնեցին, որ «այդ ժամանակաւոր արգելքները չեն կարող խախտել Փոխարքայի բարի որոշումները և Վրաստանին նա կը տրվեն ինքնավարական այն անհրաժեշտ սկզբունքները, առանց որոնց անհնարին է որ և է խաղաղ կուլտուրական զարգացում Վրաստանում»: Ապա պատգամաւորները, ազնուականութեան ցանկութեան համաձայն Փոխարքայի ուշադրութիւնը հրաւիրեցին «Վրաստանի ազգաբնակութեան աննկարագրելի ծանր վիճակի վրա, որի մէջ է գտնվում նա զինուորական դրութեան շնորհիւ և որի ժամանակ կատարվում են այնպիսի ծայրահեղ խստութիւններ, որոնք ոչնչով չեն արդարացվում»:

Դիմումը կարդալուց յետոյ, պատգամաւորները երկար ժամանակ զրուցում էին Փոխարքայի հետ և նկարագրեցին Քութայիսի նահանգում կատարվող բոլոր անկարգութիւնների պատկերը:

Ի վերջոյ Փոխարքան պատասխանեց պատգամաւորութեան հետեւեալ խօսքերով.

«Խնդրում եմ յայտնել շնորհակալութիւնս Քութայիսի նահանգի ազնուականութեանը դէպի ինձ ունեցած զգացմունքների համար: Ես սիրում եմ վրաց ազգը և ոչ ոք չը պէտք է կասկածէ անգամ, որ ես նրա, ինչպէս և Կովկասի միւս ազգութիւնների համար կանեմ այն բոլորը, ինչ որ պահանջում են իսկական կարիքները: Եւ, ի հարկէ, հիմք չը կայ երկիւղ կրելու, որ շնորհված բարենորոգումները Վրաստանի համար չեն գործադրվի:

Ես համոզված եմ, որ ձեզ ևս կը տրվի նոյնը, ինչ որ բուն ռուս ազգաբնակութեանը, միայն թէ անհրաժեշտ է, որ երկրի մէջ խաղաղութիւնը ու կարգը վերականգնվեն, առանց որին անհնարին է որ և է շինարար աշխատանք: Գիտեմ, որ զինուորական դրութիւնը նեղում է ազգաբնակութեանը, բայց դուք յիշում էք, որ երբ վերացվում էր զինուորական դրութիւնը, աւելի վատթար էր լինում: Ամեն միջոց ձեռք կառնեմ, որպէս զի խաղաղ ազգաբնակութիւնը զոհ չը դառնայ զինուորական օրէնքների խստութիւններին: Ես ոչ մի քաղաքական ուղղութիւն չեմ հալածում, եթէ միայն նա չէ խախտում կարգը և ուրիշի իրաւունքները: Բայց համաձայնվեցէք, որ տեղական քաղաքական կազմակերպութիւնների գործունէութիւնները ընդունել չէ կարող ոչ մի կառավարութիւն, որ պաշտպանում է քաղաքացիների իրաւունքը և կեանքը: Ես դիմում եմ ձեր հասարակութեան բոլոր ազդեցիկ անդամներին և հրաւիրում օգնելու ինձ խաղաղութիւնը վերականգնելու գործում, որ անհրաժեշտ է երկրը բարեկարգելու համար, համաձայն բարձրագոյն կամքի»:

ԸՆՏՐՈՒԹԻՒՆՆԵՐԻ ԿԱՏԱՐՈՒՄԸ

Ընտրութիւնները ընդհանրապէս կատարվում են հետեւեալ կերպով—ամբողջ երկիրը բաժանվում է ընտրողական շրջանների: Ընտրողական շրջանը յարմարեցվում է կամ արդէն գոյութիւն ունեցող բաժանումին այնպէս, որ, օրինակի համար, ամեն մի գիւղական համայնք կամ ամեն մի քաղաքամաս կազմում է մի առանձին ընտրողական շրջան, և կամ ընտրողական շրջանը որոշվում է բնակիչների թւի համաձայն, առանց ինկատի ունենալու արդէն գոյութիւն ունեցող բաժանումները, այնպէս որ, այս պարագայում, մի և նոյն գիւղական համայնքի կամ քաղաքամասի զանազան մասերը կարող են զանազան ընտրողական շրջանների մէջ մտնել, ինչպէս և գիւղական մի քանի համայնքներն ու քաղաքամասերը կարող են մի և նոյն ընտրողական շրջանի մէջ մտնել:

Ամեն մի ընտրողական շրջան ընտրութիւնները կատարում է առանձին և բոլորովին անկախ միւս շրջաններից:

Իւրաքանչիւր ընտրողական շրջանի համար ընտրողների ցուցակ են կազմվում, այսինքն՝ այն անձերի ցուցակը, որոնք ընտրութիւններին մասնակցելու իրաւունք ունեն: Այդ ցուցակը պէտք է յայտարարվի ի գիտութիւն ընդհանուրի, պէտք է տպված և կախված լինի ամեն տեղերում, ուր ժողովուրդ է հաւաքվում. հրապարակներում, գիւղական դատարաններում, գործարաններում և այլն, որպէսզի ամեն մի ընտրող հնարաւորութիւն ունենայ ստուգելու, թէ արդեօք իր անունն էլ մտցված է այդ ցուցակի մէջ, և եթէ ոչ, պահանջէ որ մտցնեն:

Ընտրութիւններից առաջ զանազան քաղաքական կուսակցութիւններ, կամ նոյն իսկ առանձին անհատներ, իրանց թեկնածուներն են առաջարկում, այսինքն՝ յայտարարում են այն մարդկանց անունները, որոնց պատգամաւոր ընտրվելը նրանց համար ցանկալի է: Թեկնածուները, ի հարկէ, պէտք է ծանօթացնեն ընտրողներին թէ ինչպէս են իրանք հասկանում ժողովրդի շահերը և ինչպիսի հիմնական օրէնքներ պէտք է պահանջեն սահմանադրութիւն մշակող ժողովում:

Դրա համար թեկնածուները շրջում են ընտրողական շրջանը, ճառեր են խօսում ընտրողների առաջ և տպագրված յայտարարութիւններ են ցրվում, որոնց միջոցով նրանք ընտրողներին ծանօթացնում են իրանց ծրագրի, հայեացքների և դիտաւորութիւնների հետ:

Նախօրօք նշանակվում է ընտրութիւնների օրը և տեղը: Ընտրութիւնների սրահի մուտքը ազատ պէտք է լինի հասարակութեան առաջ, որպէսզի սա կարողանայ հսկել ընտրութիւնների կանոնաւորութեան վրա և որ ապօրինի մեքենայութիւններ տեղի չունենան: Նոյն այդ նպատակի համար, հարկաւոր է, որ բոլոր քաղաքական կուսակցութիւնների ներկայացուցիչները մասնակցութիւն ունենան ընտրողական բիւրոյի մէջ, այսինքն այն մարմնի մէջ, որին յանձնված է ընտրութիւնները ղեկավարել, որովհետեւ նոյն այդ ընտրութիւնները ղեկավարող չինովնիկները կարող են խարդախութիւններ կատարել յօգուտ այն կուսակցութիւնների, որոնք հաճելի են կառավարութեանը և վնասակար ժողովրդին:

Ամեն մի ընտրող ստանում է անուանական տոմս, որով վաւերացվում է, թէ նա իրաւունք ունի ընտրութիւններին մասնակցելու: Քուէարկելու ժամանակ այդ տոմսակը ներկայացվում է բիւրոյին, որը ընտրողական ցուցակի մէջ նշանակում է, թէ այսինչ մարդը արդէն քուէարկել է:

Անուանական տոմսակը ուրիշին տալը, ուրիշի փոխարէն քուէարկելը առհասարակ չէ թոյլատրվում, որովհետեւ այդ ձևով կարելի է շատ բան ի չարը գործ դնել. հարուստները փողով կը գնեն աղքատներից քուէարկելու իրաւունքը և այդպիսով իրանց ձեռքը կը գցեն բոլոր ընտրութիւնները:

Ընտրութիւնները կատարվում են ընտրողական բիւլետեններով, այսինքն՝ յատուկ թերթիկների միջոցով, որոնց վրայ տպված են թեկնածուների անունները: Այդ թերթիկների վրա տպված են լինում կամ բոլոր թեկնածուների անունները, կամ թէ ամեն մի կուսակցութիւն, որը իր յատուկ թեկնածուն է ներկայացնում, տպում է իր առանձին թերթը, վրան նշանակելով միայն իր թեկնածուի անունը: Առաջին դէպքում ընտրողը ջնջում է բոլոր թեկնածուների անունները, բացի այն մարդու անունից, որին ինքը ցանկանում է քուէ տալ: Իսկ երկրորդ դէպքում, բոլոր ընտրողներին բաժանվում է իւրաքանչիւր կուսակցութեան թերթիկներից, որից յետոյ քուէարկողից է կախված, թէ որ կուսակցութեան թերթից կօգտվի և ում քուէ կը տայ:

Այն դէպքում, երբ միեւնոյն թերթի վրա են տպագրված բոլոր թեկնածուների անունները, ընտրողական բիւրոն ընդհանրապէս ճիշտ ընտրութիւնների ժամանակ է բաժանում այդ թերթիկները, իւրաքանչիւր ընտրողին մի թերթիկ տալով: Եւ եթէ քուէարկութիւնը գաղտնի է, ընտրողը մտնում է մի առանձին սենեակ, ուր նա մնում է բոլորովին միայնակ, որպէսզի ոչ ոք չը կարողանայ տեսնել, թէ նա ում անուններն է ջնջում և ումը թողնում: Երբ այդպիսով բիւլետէնը պատրաստ է, բիւրոն կանչում է ընտրողին և սա բիւրոյի ու հասարակութեան աչքի առաջ է իր թերթիկը գցում քուէատուփի մէջ, որպէսզի ոչ ոք չը կարողանայ մի քանի բիւլետէն գցել: Այս բոլորը, ի հարկէ, կատարվում է, ինչպէս ասացինք, այն դէպքում միայն, երբ քուէարկութիւնը գաղտնի է. իսկ եթէ նա գաղտնի չէ, այն ժամանակ ընտրողին պարզապէս հարցնում են թէ՝ ում է նա տալիս իր քուէն, և կամ թէ, ինչպէս անում են գիւղական ժողովների ժամանակ, պարզապէս ասում են՝ ով ցանկանում է այս ինչին ընտրել, թող ձեռք բարձրացնի, իսկ ով համաձայն չէ, թող մի կողմ քաշվի:

Երբ բոլոր ընտրողները իրանց բիւլետէնները քուէատուփի մէջ գցում, վերջացնում են, այն ժամանակ սկսում են հաշուել, թէ իւրաքանչիւր թեկնածուի համար քանի քուէ է տրըված: Այդ հաշիւը պէտք է կատարել ընտրութիւններից անմիջապէս յետոյ, թէկուզ գիշերվայ ուշ ժամ էլ լինի: Նոյնպէս անհրաժեշտ է, որ դա կատարվի հասարակութեան ներկայութեան և բոլոր կուսակցութիւնների ներկայացուցիչների մասնակցութեամբ: Ամենից շատ քուէ ստացողը իսկոյն և եթ ընտրըված է յայտարարվում:

Կան այնպիսի կանոններ, որ ընտրված լինելու համար բաւական չէ տրված ձայների ամենամեծ թիւը ստանալ, այլ անհրաժեշտ է, որ բոլոր ձայների կէսից աւելին ստացված լինի: Ենթադրենք, օրինակի համար, թէ քուէարկողները 1000 հոգի են եղել. Յովհաննէսին տուել են 450 ձայն, Տրդատին 300, իսկ Պետրոսին 250 ձայն: Եթէ ընտրութիւնները կատարվում են ձայների հասարակ մեծամասնութեամբ, այն ժամանակ Յովհաննէսին ընտրված պէտք է համարել: Իսկ եթէ ընտրված լինելու համար պահանջվում է՝ բոլոր տուած ձայների կէսից աւելին ունենալ, այդ պարագայում վերոյիշեալ թեկնածուներից և ոչ մէկը ընտրված չէ կարելի համարել: Այսպիսի դէպքում նոր ընտրութիւն—կրկնաքուէարկութիւն է նշանակվում երկու առաւելագոյն քուէներ ստացող թեկնածուների մէջ, մեր օրինակով Յովհաննէսի և Տրդատի մէջ: Պարզ է որ կրկնաքուէարկութեան ժամանակ այն անձինք, որոնք առաջին անգամ իրանց քուէները Յովհաննէսին ու Տրդատին էին տուել, դարձեալ նրանց կը տան իրանց քուէները: Իսկ թէ վերջապէս ով կը լինի ընտրըված,—այդ կախված կը լինի այն հանգամանքից, թէ արդեօք ում կը տան իրանց քուէները Պետրոսի կողմնակիցները: Եթէ նրանք իրանց բոլոր ձայները տան Տրդատին, այն ժամանակ կրկնաքուէարկութիւնից յետոյ սա կը ստանայ 550 ձայն, իսկ Յովհաննէսը կը մնայ իր 450 ձայնով: Ուրեմն, ընտրվածը կը լինի Տրդատը, թէև առաջին քուէարկութեան ժամանակ նա Յովհաննէսից պակաս ձայն էր ստացել: Այսպիսով կրկնաքուէարկութիւնների հետեւանքը կախված է այն ընտրողներից, որոնք ամենաքիչ քուէ ստացող թեկնածուներին էին տուել իրանց ձայները, ուստի և այդ ընտրողները հնարաւորութիւն ունեն խելացի կերպով օգտվելու այդ հանգամանքից: Օրինակի համար, եթէ Պետրոսը եղել է բանւորների թեկնածուն, բանւորները կարող են ասել. մեզ չը յաջողվեց մեր թեկնածուին անց կացնել, բայց կրկնաքուէարկութեան ժամանակ մեր ձայները կը տանք նրան, ով կը խոստանայ սահմանադիր ժողովում ռամկավարական կարգեր պահանջել: Եւ եթէ Տրդատը խոստանայ այդպիսի պարտաւորութիւն իր վրա վերցընել, մենք նրան կը ընտրենք կրկնաքուէարկութեան ժամանակ, այլապէս թող նա մեզանից ոչ մի օգնութիւն չը սպասի:

Կրկնաքուէարկութեան ժամանակ նոյնպէս մեծ նշանակութիւն ունեն և այն ընտրողները, որոնք առաջին ընտրութեան ժամանակ զանազան պատճառներով չէին մասնակցել ընտրութիւններին: Քանի որ ժողովուրդը դեռ պարզ կերպով չէ ըմբռնել, թէ ինչ մեծ նշանակութիւն ունեն իր համար պետական կարգերը, շատերը չեն մասնակցում ընտրութիւններին, ասելով թէ՝ դա իմ գործը չէ, ես իմ տնային զբաղումները ունեմ, տանս կտուրը պէտք է նորոգել և այլն: Նա էլ չէ հասկանում, որ իր տնային և այլ գործերի վատ գնալու պատճառը հէնց այն է, որ պետական գործերը վարող մարդիկ ամենածանր հարկերը դնում են ժողովրդի վզին, իսկ հարուստներին ազատում են շատ հարկերից, ժողովրդին պահում են խաւարի, տգիտութեան մէջ, իսկ հարուստների համար շինում են գրադարաններ, մուզէյներ, համալսարաններ. ժողովրդին զրկում են ամեն իրաւունքներից, իսկ հարուստներին ամեն տեսակ արտօնութիւններ են շնորհում:

Քուէարկութիւններին չը մասնակցելը մեծ չարիք է. դա ժողովրդի տհասութիւնն է ապացուցանում: Հարկաւոր է բոլորին և իւրաքանչիւրին, նամանաւանդ բանւորներին ու գիւղացիներին, լաւ հասկացնել, որ նա պարտաւոր է գնալ ընտրութիւններին և ձայն տալ իրանց շահերը պաշտպանող թեկնածուներին: Եթէ առաջին ընտրութիւնների ժամանակ չը յաջողվեց բոլորին հասկացնել և քնից սթափեցնել, հարկաւոր է կրկնաքուէարկութեան ժամանակ արթնացնել նրանց խիղճն ու գիտակցութիւնը: Կրկնաքուէարկութեան ժամանակ բանւորական թեկնածուին հազիւ թէ բանւորներից զատ մի ուրիշը քուէ տայ, ուստի երբ բանւորական թեկնածուն կրկնաքուէարկութեան է ենթարկվում, նրան կարող են օգնութեան հասնել միայն այն բանւորները, որոնք առաջին ընտրութիւններին չէին մասնակցել. կրկնաքուէարկութեան գալով, նրանք իրանց թեկնածուին նոր քուէներ կը տան:

ՄԵՆՔ ԲՈԼՈՐՍ ԿՈՎԿԱՍԻ ԶԱՒԱԿՆԵՐ ԵՆՔ

Ահա այն կոչը, որ հնչեցնում է այժմ «Իրշադը» իր մարտի 9-ի առաջնորդող յօդուածում: Մենք այնքան հակասութիւնների հանդիսատես ենք լինում այդ օրգանում, որ կամայ-ակամայ լաւագոյն խօսքերն ու լաւագոյն իղձերն անգամ թողնում են մեզ անտարբեր: Այնուամենայնիւ արձանագրենք «Իրշադի» ժամանակաւոր խմբագիր, Ալիֆ-բէկ Հաջիբէկովի բարի ցանկութիւններով առգորված յիշեալ առաջնորդողի հետեւեալ տողերը.

Բաւական է, խելքի գանք... Մենք բոլորս Կովկասի զաւակներ ենք. Կովկասի համար մեր սրտում անսահման սէրը, բնական է, որ մեզ կապէ միմեանց... Բոլորս Կովկասի զաւակներ ենք. մէկ են մեր կարիքներն ու պահանջները, մեր ապագայ բարօրութիւնն ու բարգաւաճութիւնը կախված է մեր բոլորի միահամուռ ջանքից ու աշխատանքից. մի ձեռքը ծափ չի տայ. երբ մեզանից մէկը աղէտի ենթարկվեց, միւսը հոգով-սրտով պէտք է ջանայ նրան ազատելու. երբ բաղդը մէկին ժպտաց, պէտք է աշխատենք, որ միւսն էլ նրան մասնակից լինի: Երբ մէկս դժբաղդացանք, միւսը չէ կարող բաղդաւոր լինել. պէտք է լաւ ըմբռնենք այս... Մենք բոլորս Կովկասի զաւակներ ենք: Մէկիս թշնամին, միւսին էլ թշնամի է. հետեւաբար պէտք է բոլորս միասին աշխատենք նրան վանելու. երբ մեզանից մէկին վտանգ է սպառնում, բոլորիս է սպառնում, մեր փրկութիւնը միութեան մէջ է: Կրօնի և ազգութեան խտրութիւնը մեր միութեան արգելք չը պէտք է լինի. մենք բոլորս Կովկասի զաւակներ ենք: Պէտք է, որ մեր նուիրական պարտականութիւնը համարենք համակրութիւնը, համամտութիւնը, համաղրութիւնը, համագործակցութիւնը: Հակառակ դէպքում մեր ոչ մի գործը ուղիղ չի գնայ: Բաղդը մեզ միմեանց չէ հանդիպեցրել, որ թշնամանանք և կռւենք: Ահա այդ պէտք է ապացուցենք: Մենք բոլորս Կովկասի զաւակներ ենք: Ուսմունքի և քաղաքակրթութեան տէր եղողներս պէտք է նեցուկ լինենք տգիտութեան մէջ գտնվողներիս, ուժեղներս՝ տկարներիս, հարուստներս՝ չքաւորներիս: Այս կերպով պէտք է վարվենք, որպէս զի ուրիշներից եկած հարուածները չազդեն մեր վրա: Մենք Կովկասի զաւակներ ենք. այսուհետեւ մեր ամբողջ ջանքն ու աշխատանքը պէտք է ուղղված լինի դէպի միմեանց պաշտպանելը և յարգելը: Երբ մէկս՝ միւսին վերաբերմամբ մի վատ ընթացքի մէջ է գտնվում և վնասվողը բողոքում է, պէտք է որ վնասողը ապացուցանէ վնասվողի բողոքի անհիմն լինելը: Պէտք է որ աշխատենք մեր մէջ ծագած բոլոր հակառակութիւններն ու թիւրիմացութիւնները պարզելու: Մենք Կովկասի զաւակներ ենք. մենք պէտք է որ ունենանք մեր ընդհանուր դպրոցները, լրագիրները: Ընդհանուր միութիւններ, ընկերութիւններ, ժողովներ կազմելով պէտք է որ մեր բոլոր կարիքների ցաւերի համար դարմաններ որոնենք... Այսուհետեւ մեր լօզունգը պէտք է այս լինի. մէկիս երջանկութիւնն ու բաղդաւորութիւնը կապված է միւսիս երջանկութեան և բաղդաւորութեան: Այսուհետեւ մենք, կովկասցիներս, այդ մեզ համար ուղեցոյց ընդունելով՝ գործ համաձայն գործենք:

Սրանց բոլորը պէտք է հասկացնել ամբոխին. այդ էլ կարելի է լրագիրների միջոցով: Մեր լրագիրների գլխաւոր պարտականութիւնը պէտք է լինի այսուհետեւ ամբոխը առաջնորդել բարի գործերի: Եթէ մեր լրագիրները անմիտ ու անիմաստ վէճերը, գրգռիչ յօդուածները մի կողմ թողնելով՝ համաձայնութեան, միութեան մասին անկեղծ յօդուածներ տպեն և միութեան միտքը գործի փոխելու ճանապարհն ու միջոցները ժողովրդին յայտնեն, շուտով մենք կը հասնենք մեր բարի նպատակին:

Մեր զարգացածներն ու առաջնորդներն էլ պէտք է միութիւնը առաջ բերող ձեռնարկների գլխին: Դրանց գլխաւորն էլ դպրոցներ բանալու և մի ընդհանուր լրագիր հրատարակելու մէջ է կայանում: Ուրեմն ջանք ու աշխատանք գործ դնենք, Կովկասի զաւակներ: Անցածը անցաւ: Մոռանանք անցեալը: Մտածենք ապագայի ցաւերին: Ինչպէս տեսնում էք, մեր բոլոր պէտքերն ու կարիքները մէկ են: Ինչ հարկաւոր է քեզ, նոյնը ինձ է հարկաւոր: Մեր պահանջները հասունացել են: Պէտք է նրանց լուծել: Եթէ չը լուծվի, չէք իմանում, չէք մտածում թէ յետոյ ինչի կը դատապարտվենք: Իսկ մեր պահանջների բաւականութիւնը կախված է հէնց մեր կովկասցիներիս ջանքից ու աշխատանքից: Մենք բոլորս Կովկասի զաւակներ ենք. մէկիս երջանկութիւնն ու բաղդաւորութիւնը, միւսի երջանկութեան ու բաղդաւորութեանն է կապված: Եթէ ցանկանում ենք հասնել մեր երջանկութեան և բաղդաւորութեան ձեռքից եկած ջանքն ու աշխատանքը չը խնայենք:

Սրանք գեղեցիկ խօսքեր են, մեր սըրտից բղխած խօսքեր, այնպիսի խօսքեր, որոնց՝ դժբաղդ դէպքերի սկզբից և եթ, առանց յոգնելու, առանց յուսահատվելու կըրկնել ենք. մենք աղաղակել ենք. մի մոլորվէք, մի երկրի զաւակներ, մի հողի վրա, մի երկնքի տակ աշխատողներ՝ մենք պէտք է որ հասկանանք միմեանց, գործենք ձեռք ձեռքի տուած յօգուտ ընդհանուր հայրենիքի: Դուք առանց մեզ չէք կարող ապրել, մենք՝ առանց ձեզ: Մենք ճակատագրապէս կապված ենք միմեանց:

Այս եղել է մեր անխախտ համոզումը, մեր փայփայած ու փառաբանած իդէալը: Բայց թուրք մամուլի գործիչները չեն հասկացել մեզ: Մինչդեռ մենք եղբայրութեան, համերաշխ գործակցութեան խօսքը անդադար հըրնչեցրել ենք, գաղափարին յամառ փարած զինւորի նման, թուրք մամուլը, նայած փչող հովերին, յաճախ ատելութիւն և քիչ անգամ սէր և համերաշխութիւն է քարոզել: «Իրշադը» չէ՞ր, որ հէնց մի քանի շաբաթ առաջ հայերին ամբաստանում էր կեղծ փող կտրելու և չեմ իմանում դեռ ուրիշ ինչ գիւային գործերի մէջ: Իսկ այսօր նա եղբայրութեան է հրաւիրում մեզ: Պէտք է որ համերաշխութեան գաղափարը մի նուիրական դրօշակ լինի «Իրշադի» և առհասարակ թուրք մամուլի համար, որպէսզի միմեանց հակասող այդ հակասութիւնները տեղ չը գտնեն նրա էջերում:

Մենք միշտ երկարել ենք մեր ձեռքը եղբայրութեան համար, և պատրաստ ենք հըրճուանքով սեղմելու ձեր ձեռքը, եթէ նա երկարվում է դէպի մեզ անկեղծութեամբ և վըստահութեամբ:

Ձ.

ՄԻՋՆՈՐԴ ՅԱՆՁՆԱԺՈՂՈՎՆԵՐԻ ԱՆՀՐԱԺԵՇՏՈՒԹԻՒՆԸ

Մեր կեանքի չարիքները, մեր ցաւերն ու պատուհասները օրէցօր բազմանում են. մեր դժոխային կացութիւնը գնալով վատթարանում է: Լրագրութիւնը արձանագրում է հնարաւորութեան չափ ամեն բան, թէև ոչ կատարեալ ազատութեամբ. հռչակաւոր «անկախ պատճառները» որոշ չափով գոյութիւն ունեն դեռ ու գուցէ շուտով բացարձակ ասպարէզ գան նախկին ոյժով ու գժտութեամբ: Լրագրութեան մէջ արձանագրածը շատ անգամ չէ հասնում նրանց ականջներին, որոնց յանձնըված է երկրի կառավարութեան ղեկը, որոնց քմահաճոյքներից է կախված չարի ու բարիի գոյութիւնը մեր դժբախտ երկրում: Քանի որ այդ այդպէս է, առանց նրանց դիմումներ անելու, առանց նրանց դուռը բաղխելու ու ուշադրութիւնը հրաւիրելու այս կամ այն չարիքի վրա, յոյս չէ մնում մեր անտանելի կացութեան այժմեան պայմաններում: Այդ դիմումների պահանջը ամեն րոպէ զգացվում է ամեն տեղ, մանաւանդ մեր գիւղական շրջաններում, որտեղ չարիքները, միջնադարեան, ասիական, անհեթեթ անչափ, աւելի յաճախակի են ծագում ու աւելի զգալի են միշտ:

Քանի որ մեր երկրի վարչական գլխաւոր մարմինները գտնվում են Թիֆլիսում, բնականաբար կարիք եղած դէպքում գիւղն իր աչքերը յառում է Թիֆլիսի վրա, որտեղից իր համար փրկութիւն, թեթեւութիւն է հայցում, յաճախ շատ միամտաբար, ի հարկէ... Թիֆլիս դիմելը, այնտեղ մարդիկ, պատգամաւորութիւն ուղարկելը հեշտ չէ. ամենահամեստ պատգամաւորութեան գնալ-գալը Թիֆլիս որ և է հեռաւոր գիւղից (Գանձակի կամ Երևանի նահանգից, օրինակ) նստում է գիւղի վրա առնուազը հարիւր րուբլի, որը մեծ գումար է գիւղի համար. յաճախակի դրանից շատ աւելի է դուրս գալիս, եթէ մանաւանդ պատգամաւորները օգտվում են հանգամանքից ու իրանց բանը տեսնում յանուն «գիւղի շահերի»... Հնարովի, շինծու ծախսեր են ցոյց տալիս նրանք. գիւղն էլ միամտութեամբ ընդունում է, վճարում է իր հարկահանի բազմաթիւ «դաւթարում» ու լռում: Շատ գիւղերի համար անհնարին բան է այդ պատճառով Թիֆլիս պատգամաւորութիւն ուղարկելը. որ և է խղճուկ Զովքառի կամ Կիրանցի համար անհներելի շռայլութիւն է դա. նրանք ստիպված են լինում լռել, ճարահատեալ լուռ տանում են ամեն տեսակ պատուհաս:

Այդ պատուհասները այժմս այնքան շատ են ու այնքան ահռելի, որ լռելը, նրանց մասին չը խօսելը, չը բողոքելը յանցանք է ուղղակի, կործանարար յանցանք. նրանց մասին պէտք է խօսվի որտեղ ու ում հետ հարկն է. ամեն գիւղ, ամեն անկիւն պէտք է իր ձայնը, իր բողոքները հարկը պահանջած դէպքում առանց ուշացնելու լսելի դարձնել Թիֆլիսում, արտաքոյ կարգի դէպքերում, որոնք հազւագիւտ չեն, նոյն իսկ աւելի հեռաւոր տեղերում, քանի որ այդ բանն անում են շատ եռանդուն կերպով նրանք, որոնք վերջին տարվայ ընթացքում այնքան չարիք հասցրին հայ ժողովրդին, մանաւանդ գիւղական ժողովրդին: Բազմաթիւ են այնպիսի դէպքերը, երբ նրանք, մեր դրացիները, մի բան իրանք արած, մի յանցանք գործած, շուտափոյթ գանգատով, ժամանակին ուր ու ում հարկն է տուած, աշխատել են նոյն բանը հայերի վրա գցել ու այդպիսով առել են հայերի գանգատի առաջը, պատմել են պատասխանատուութիւնից ու նոյն իսկ աջողեցրել են հայերին պատասխանատու դարձնել իրանց գործած յանցանքի համար. ձեզ օրինակ Բրաջուր գիւղի հռչակաւոր պրովակացիան. անհիմն ու շուտափոյթ տուած գանգատի շնորհով ամբողջ գիւղը գանակոծվեց ու տակն ու վրա եղաւ:

Երկար ապացոյցների կարօտ չէ այն պարզ բանը, որ այժմեան պայմաններում, մինչև բարւոք, քիչ-շատ տանելի, կացութեան հաստատվելը, մեր բոլոր քաղաքներում հարկաւոր է ունենալ մի յատուկ յանձնաժողով, իրաւաբաններից ու առհասարակ աչքի ընկնող ինտելիգենտ ույժերից բաղկացած, որը պարտաւոր լինի գիւղերի ու գիւղացիների համար ձրիաբար խնդրագրեր կազմել ու զանազան միջնորդութիւններ կատարել իշխանաւորների ու պետական հաստատութիւնների առաջ: Գաւառական քաղաքներից Գանձակում, օրինակ, այդպիսի յանձնաժողով գոյութիւն ունի այժմ, որը բաւականին օգնում է գիւղացիներին՝ այս կամ այն դիմումն անելու իշխանաւորներին: Այդպիսի միջնորդ յանձնաժողովի (комиссія для ходатайство) գոյութիւնը, աւելի կանոնաւոր, աւելի յարատեւ ու աւելի մեծ եռանդով գործող, ամենից շատ ցանկալի է Թիֆլիսում: Եթէ այդ յանձնաժողովը ընդունի զանազան տեղերի գիւղացիներից խնդրագրեր, անձամբ տուած կամ պօստով ուղարկված, ու ներկայացնի ուր և ում հարկն է ու առաջ մղի գիւղի խնդիրքը, միջնորդութիւնը հնարաւորութեան չափ, տեղեկութիւններ հաղորդէ գիւղացիներին նրանց գործի մասին, անչափ գնահատելի բարիք արած կը լինի մեր խեղճ գիւղերին, մանաւանդ Թիֆլիսի նահանգից դուրս գտնվող հեռաւոր խուլ գիւղերին, որոնք գլուխները կորցրած չը գիտեն ում դիմեն, ում դիմեն ու ինչպէս դիմեն: Շատերը գիւղացիներից ուրախացել են, կարծելով թէ փոխարքայի վարչութեան կից գտնվող հայ-թուրքական ժամանակաւոր խորհրդակցութեան հայ անդամները ընտրված են յատկապէս հայերի կողմից խնդրագիր և միջնորդութիւններ ներկայացնելու փոխարքային ու միւս իշխանաւորներին: Եթէ ընտրված պարոնները այդպիսի միսիա յանձն առնեն ու տանեն նրան մինչև բարւոք դրութեան հաստատումը մեզանում, անեն մի բան, որը նրանք տողերիս գրողից շատ լաւ են հասկանում ու գնահատում, դրանով մեծ ծառայութիւն կը լինեն մատուցած մեր գիւղական ժողովրդին, որ իր բոլոր յոյսը այժմս դրած ունի իր ինտելիգենցիայի վրա: Շատ լաւ կը լինի, եթէ խորհրդակցութեան պ. պ. անդամները յայտարարեն այն հասցէն, որով կարելի կը լինի նրանց խնդրագրեր ու միջնորդութիւններ ուղարկել գիւղերի կողմից: Թոյլ եմ տալիս ինձ կրկնել՝ այս բանն անհրաժեշտ է անչափ. իշխանաւորներին ու հաստատութիւններին պօստով ուղարկած խնդրագրերը շատ անգամ անպատասխան են մնում. պատահում է, որ չեն էլ կարդացվում...

Ստ. Տէր-Աւետիքեան

ԲԱՐԵՆՈՐՈԳՈՒԹԻՒՆՆԵՐ ՀԱՅ ԵԿԵՂԵՑՈՒ ՄԷՋ

I

Ամեն մի հիմնարկութիւն, եթէ նա չէ համապատասխանում ժամանակի պահանջներին, եթէ չէ ընթանում ժամանակի հետ, քարանում, մեռնում է: Դա մի բնական օրէնք է, բնական ընթացք ամենատեսակ հիմնարկութիւնների համար, լինի նա մի մասնաւոր հիմնարկութիւն, թէ եկեղեցի կամ նոյն իսկ պետութիւն: Եկեղեցին իբր մի պահպանողական հիմնարկութիւն, մանաւանդ իր արտօնեալ դասակարգով, որ երջանիկ անհոգութեամբ և յանդուգն մեծամտութեամբ իր շուրջը միշտ լաւ ու օրինաւոր է տեսնում, այո, եկեղեցին իր հնացած դարաւոր, յաճախ նոյն իսկ անմիտ, իսկ երբեմն բացարձակ վնասակար կարգերը փոփոխութեան ենթարկելու անտրամադիր ու յամառ, ամեն դարերի համար, բայց մանաւանդ վերջին դարում ու մեր ժամանակներում բոլոր ազգերի համար ծանր մտածողութեան խնդիրներ է յարուցել ու յարուցանում: Այդ խնդիրները մի կողմից յանգել են տալիս կտրել իր կապերը հասարակական կարգերին (Ֆրանսիայում) վտանգ սպառնող պահպանողական—ռէակցիոնէր այդ հիմնարկութեան հետ, միւս կողմից այն երկրներում, ուր ենթադրվում է թէ նա, եկեղեցին, կարող է օգտակար լինել դեռ,—կոմպրոմիսներով թոյլ են տալիս գոյութիւն ունենալ: Չը կայ մի երկիր, ուր հոգեւորականութիւնը պահպանողական տարր չը լինի, ու իր սեպհական շահերը չառաջադրէ:

Մենք միշտ սովոր ենք լսել, որ հայ եկեղեցին ժողովրդական է, որ նա ազատամիտ հիմնարկութիւն է: Սրանք մաշված ֆրազներ են, արդիւնք, մեր եկեղեցու պատմական կեանքի կատարեալ անծանօթութեան: Լրագրական էջերը շատ անձուկ են, որ մարդ կարողանայ ընդարձակ պատմական հայեացք գցել հայ եկեղեցու պատմական անցեալի վրա: Դա մեր նպատակից դուրս է. միայն այսքանը կասենք, որ հայ քաղաքական կեանքի ժամանակ, եկեղեցին՝ ի դէմս հայրապետների, միշտ, երբ իրան զօրեղ է զգացել, խիստ ընդհարման մէջ է եղել քաղաքական իշխանութեան հետ: Արշակ երկրորդի և Պապի ժամանակ նա ջլատել է քաղաքական իշխանութեան ոյժը, նրան թուլացնող և սասանեցնող գլխաւոր հանգամանքներից մէկը, գուցէ և գլխաւորը հանդիսանալով: Երբ ուսումնասիրում ես Բագրատունեաց անկման պատճառները, մանաւանդ երկու վերջին թագաւորների ժամանակում, ներքին յուզող խնդիրները, և երբ ակներեւ է դառնում քեզ համար Պետրոս Գետադարձ կաթողիկոսի մղած պայքարը քաղաքական իշխանութեան դէմ ու նրա դերը վերջին Գագիկ թագաւորի ժամանակ, չես կարող զարմանքի և զզուանքի զգացմունքներ չունենալ սրբի անուն ու համբաւ ունեցող այդ, բառիս չարագործ վեղարաւորի դէմ:

Ճշմարիտ է, եղել են և լաւ, սրտացաւ հոգեւորականներ, որոնք լոյսի մի մի բացառիկ ճրագներ են, բայց առ հասարակ, երբ հոգեւոր իշխանութիւնը իրան զօրեղ է զգացել, նա միջոցների առաջ կանգ չէ առել ոճրագործութիւններ անելու քաղաքական իշխանութեան դէմ: Իսկ իր ներքին կեանքում, զանազան, նոյն իսկ հասարակական բնոյթ ունեցող խնդիրներում, նա միշտ մտցրել է, շատ անգամ կամայականօրէն՝ խստութիւն, անհամբերութիւն, կեղծ բարեպաշտութիւն և այլն, և այլն, որոնք մի ընդհանուր բնոյթ ունեն— բռնանալ մարդկային կամքի և ազատ ու արդար իրաւունքների վրա, նրանց ոտնատակ տալ և ապա երջանիկ մոլորութեամբ հրճվել գոհ սրտով՝ իր բարեպաշտական այդ գործերով:

Անցեալի պատկերը արտացոլում է ներկայիս մէջ: Դիտեցէք մեր ամբողջ հոգեւոր իերարխիան, իր բոլոր վարչական մարմիններով. դա ձեզ, ապահով եղէք, հրճուանք չի պատճառի, շատ դէպքում գուցէ դուք մտածէք կապերը խզելու մասին, սակայն նրա իրաւական դերը վէմ քարի պէս կը կանգնէ ձեր առաջ: Նա իր ամբողջ պատկերով, թէև դեռ անկերպարան, ապիկար, սակայն իր շատ արտայայտութիւններով, իր կարգադրութիւններով և տիրող կարգերով կասէ, որ ինքը կայ, ինքը իշխող է. որից պարզ է, թէ դու կամայ թէ ակամայ իրան հաշւի պիտի առնես: Եւ դու հաշւի ես առնում. եթէ չես կարող քանդել, պիտի քայքայվող շէնքը կարկատես, կոմպրոմիսներ անես: Դա քո վերջին ճիգը, վերջին յուսահատական քայլը կը լինի ի հարկէ, սակայն վճռական քայլը, որի միակ միտքն է այդ հիմնարկութիւնը ծառայեցնել քո շահերին, քո առաջադիմութեանդ, կամ վատագոյն դէպքում անվնաս անել, չէզոքացնել նրա յետամնաց, ռէակցիոնէր ազդեցութիւնը հասարակական գործերի վրա:

Այժմ մենք կանգնած ենք այդ քայլն անելու, այո, այդ վերջին քայլն ու զիջողութիւնն անելու հրամայող հանգամանքների առաջ: Խնդիրը նրանում չէ կայանում, որ ժողովուրդը զիջողութիւններ անի, այլ նրանում, թէ նա հարկադրէ մեր հոգեւոր իշխանութեանը ու հարկադրելով նրան՝ զիջողութիւնների ճանապարհի վրա դնէ: Ով ականջով չէ լսում, թիկունքով է լսում. չէ՞ որ աւետարանի այդ խօսքերը մեր հոգեւոր հայրերի բերանում 1600-ից աւելի տարիներ հայ ժողովրդի ըմբոստացումները յաղթահարելու ամենասուր զէնքն են եղել: 1600 տարի այդ քարոզների տակ դառանք մի «տիրացու ազգ». թիկունքներս դաղվեց սերնդէ սերունդ, էլ բաւական է. մի քիչ էլ ըմբոստանանք, մի քիչ էլ ազատութեան զինւոր լինենք, շատ ենք տիրացու մնացել: Այժմ դերերը փոխվել են, իրաւունքների փոխանցումն է եղել: Հիմա մերն է ներթը ասելու. «ով ականջով չէ լսում, նա թիկունքով է լսում», ով կամովին չէ հրաժարվում իր բռնի իրաւունքներից, նա ճակատագրօրէն աւելի է կորցնում, քան թէ ուզում էին նրանից: Այդպէս է կարգը, հարկադրութեամբ արված զիջողութիւնները միշտ աւելի են լինում, իսկ որ գլխաւորն է, խիստ նուաստացուցիչ: Բայց այդ բոլորը չէ. մինչ կամովի արած զիջողութիւնների դէպքում, եթէ ոչ երախտագիտական, գոնէ շնորհակալութեան ու գոհունակութեան զգացմունքներ է վաստակում զիջողը, ընդհակառակը, երբ զիջողութիւնները բռնի կերպով են դուրս կորզվում, այս դէպքում վաստակը մի թշնամական զգացմունք է, որ միշտ կը մնայ դէպի կամովին չը զիջող մարդն ու հիմնարկութիւնը: Աւետարանը ճիշտ է ասել, չը լսողի թիկունքը միշտ կը ցաւի:

Բոլոր նշանները ցոյց են տալիս, ինչպէս այդ եղել է բոլոր ազգերի կեանքում, որ հայ հոգեւորականութիւնը զիջողութիւնների ճանապարհի վրա չէ կանգնել, չէ ուզում կանգնել: Ապացոյցնե՞ր էք ուզում. ահա մի երկուսը:—Այս ազատագրութեան յեղաշրջումների ժամանակներում նա, այդ հոգեւոր իշխանութիւնը եկեղեցու ու ծխի յարաբերութիւնների մէջ ստրկական կարգեր ու խնամակալութիւն տրամադրող ծրագրեր է մշակում ու առանց քաշվելու հրատարակում, որը իսկապէս մի ծաղր, արհամարհանք է դէպի ժողովրդի իրաւունքները: Նա կրօնական անհամբերութեան յիշեցնող կարգեր է սահմանում ու հալածանք սկսում անպսակ ապրողների դէմ, առանց նոյն իսկ կշռադատելու, ուսումնասիրելու, թէ կեանքի մէջ արտայայտվող այդ սովորութիւնը իր խոր և յարգելի պատճառներն ունի, և եթէ մի հալածանք հարկաւոր է, պէտք է սկսել այդ պատճառների դէմ, և ոչ նրանցից առաջ եկած հետեւանքների դէմ: Այդ խնդիրների նոյն իսկ հարեւանցի ուսումնասիրութիւնը ցոյց կը տայ, որ այդ սովորութեան ամենագլխաւոր պատճառը ինքը եկեղեցին է՝ ի դէմս իր հոգեւոր իերարխիայի, բայց մանաւանդ կուսակրօն հոգեւորականութեան, և այլն, և այլն:

Այս բոլորը անհերքելի կերպով այսպէս է. սակայն կարծում եմ, որ ժամանակն է ասելու, թէ մեզ այլ ևս ստրկական կարգեր հարկաւոր չեն. հոգեւոր խնամակալութիւնը շատ երկար է մեզ անչափահաս նկատել ու պահել, որ հայ ժողովուրդը իր գործերը կարգադրելու արդար ու ազատ իրաւունքներին գիտակից չը լինի: Այո, մենք այժմ չափահաս ենք, մենք ուզում ենք սահման դնել կամայականութիւններին, մենք ուզում ենք մեր գործերի տէրը և հրամայողը լինել: Մենք այդպէս կանենք, քանի որ հոգեւոր իշխանութիւնը ոչ միայն զիջողութեան ու լուրջ գործի մասին չէ մտածում, այլ ընդհակառակն իրան շատ բախտաւոր է զգում, ու շատ գոհ. ճեմարանի դրութիւնը ձեզ մի աւելորդ օրինակ:

Երբ խօսքը եկեղեցու ամբողջ կազմի մէջ բարենորոգումներ մտցնելու խնդրին է վերաբերում, պէտք է, մենք տեսնենք, թէ ինչ գլխաւոր հարցեր պէտք է շօշափենք՝ թէ վարչական և թէ եկեղեցու իրաւասութեան ենթակայ հասարակական խնդիրների նկատմամբ:

Ավար

ԴԱՏԱՍՏԱՆԱԿԱՆ ԴԱՀԼԻՃԻՑ

2-րդ գործը 1905 թւի փետրվարեան կոտորածի մասին նահանգական դատարանում:

Այդ գործը միեւնոյն դրամայի շարունակութիւնն է, որ տեղի ունեցաւ 1905 թւին Բագւում և Կովկասի ուրիշ տեղերում:

Այս անգամ մեղադրվում են 23 հոգի: Դրանց մեծ մասը մօտաւորապէս 30 տարեկան հասակի մարդիկ են (այդպիսիների թիւը 19 է 23 հոգուց) և միայն 4 հոգին 35 տարեկանից բարձր հասակ ունեն (մէկը 40 տարեկան է):

Համարեա ամենքն էլ գիւղացիներ են: Կալանաւորված են երեքը. Աղա Ջալալ Մուստաֆա-օղլի, Փաշայ Աղա Բէյբի-օղլի և Ջալիլ Իւսուֆ Ալի-օղլի, իսկ միւսները ազատված են գրաւականով:

Գործը պաշտպանում էին երդուեալ հաւատարմատարներ՝ պ. Միշօն, մեղադրվողներից մէկին, դատարանի որոշմամբ պ. Ավենտորժեցկի՝ 2 մեղադրվողի համար, որոնցից մէկին դատարանի որոշմամբ, և պ. Բայկով միւս 20 հոգու համար:

Մեղադրվողները ամենքն էլ մեղադրվում են պատժ. օրէնքի 2 մ. 1459 յօդ. 2691 նախատեսնած յանցանքները գործելու համար:

Այդ յօդուածի հիման վրա ամենախիստ պատիժը՝ բազմամեայ տաժանակիր աշխատանք է:

Ինչպէս առաջին գործում, այստեղ նոյնպէս միացած են մուսուլմանների մի քանի խմբեր, թէև գործում էին իրարից բաժան:

Դրանցից ոմանք (2 հոգի) պատասխանատուութեան են ենթարկվում փետրվարի 8-ին Բագւում Լալայեվի քարվանսարայի վրա յարձակվելու, կողոպտելու և այնտեղ եղած հայերին կոտորելու համար:

Մէկը դատի է ենթարկվում նրա համար, որ մի և նոյն օրերը (փետրվարի 10-ին) Սաբունչի գիւղում կողոպուտներ էր անում: Եւ վերջապէս երրորդ խումբը (20 հոգի), համարեա նոյն օրերը (փետրվարի 11-ին) Զիր գիւղի մօտիկ գտնվող Յակովլեւեան ձկնորսարանները թալանելու համար:

Այդ բոլոր յանցանքները, ասում է մեղադրութիւնը, նրանք կատարել են դէպի հայերը ունեցած ցեղական ատելութիւնից դրդված:

Վկաներ կանչված էին 40 հոգի, բայց դրանցից կէսից աւելին չէին եկել դատարան, իսկ մի քանիսների համար նոյնիսկ պատասխան չը կար ոստիկանութիւնից և յայտնի չէր հրաւիրաթերթերը յանձնված են նրանց թէ ոչ:

Բացականների թւում էին երկու պրիստաւներ՝ Թալիշխանով և Բուդկովսկի: Ինչպէս առաջին, նոյնպէս և այս երկրորդ կոտորածային գործի համար վկաների բացակայելը շատ բնորոշ է ներկայանում:

Անթիւ բացատրութիւններ ու կարծիքներ կարելի է տալ: Այդտեղ կայ և դատարան գնալու, կեանքը վտանգելու երկիւղը, և, գուցէ, դատավարութեան գործը յետաձգելու ցանկութիւնը...

Դատախազը և պաշտպանները խնդրեցին գործը յետաձգել, չափազանց կարևոր վկաների բացակայութեան պատճառով։ Նրանց միջնորդութիւնը, ի հարկէ, յարգվում է։

Գործը յետաձգվեց։ (Баку)

ՈՒՍՈՒՄՆԱՐԱՆԱԿԱՆ ՀԱՄԱԳՈՒՄԱՐԻ Ա-ՌԻԹՈՎ

III

Յիշած ձևով ընտրված համագումարը միակ հեղինակաւոր մարմինն է, որն իրաւունք ունի տնօրինելու ազգային լուսաւորութեան գործը։

Այսպէս լայն ընտրութեամբ գումարված ներկայացուցչական ժողովը իբրպէս ազգի ցանկութիւնների լիազօր արտայայտիչը կը լինի։ Հետևաբար և ազգը փաստօրէն կը վերաբերվի նրա որոշումներին։ Դպրոցը իբրպէս ազգային հիմնարկութիւն կը դառնայ,—հիմնարկութիւն, որը, մօտ լինելով ամեն մի հայի սրտին, իրաւունք կունենայ պահանջելու նրանից իր նիւթական ապահովութիւնը։ Այսպիսի համազգային ներկայացուցչութիւնը միայն իրաւունք ունի յեղափոխելու ազգային լուսաւորութեան գործը նորագոյն պահանջներին համեմատ և յարմարեցրած մեր ուրոյն ազգային պայմաններին։

Այս արմատական փոփոխութիւնների մասին թոյլ կը տամ ինձ կանգ առնել այս անգամ։ Ես յաւակնութիւն չունեմ այս թռուցիկ ցուցմունքներով սպառելու մի երկրի լուսաւորութեան վերաբերեալ բարդ խնդիրները,—իմ ցանկութիւնն է տալ դպրոցական կազմի մի ուրուագիծ, որը ցանկալի է, որ մշակվի մեր լրագրութեան մէջ։

Հասարակութեան առաջ դնելով այս բարեփոխումների համառօտ ծրագիրը, ես չեմ կասկածում, որ իմ առաջարկները, որոնք հիմնովին ժխտում են տիրող կարգերը, շատերին ուտոպի կը թւան։ Բայց, կրկնում եմ, եթէ ուզում էք, որ մի բան դուրս գայ այս համագումարից, անհրաժեշտ է ամենամեծ լրջութեամբ և շրջահայեցողութեամբ մօտենալ խնդրին։

Վարչական կազմի մասին.—Ամենից առաջ պիտի մշակվի ժողովրդի իրաւասութեան լայնացման հարցը լուսաւորութեան գործում։

Մինչև այժմ ժողովրդի իրաւունքը արտայայտվում էր «հոգաբարձուներ» ընտրելով։ Դա մի որոշ իրաւունք է, ի հարկէ, բայց եթէ լաւ քննենք հոգաբարձութիւնների դերը, կը տեսնենք, որ նրանք դպրոցի սոսկ տնտեսական կարիքները հոգալու համար են սահմանված, մի իրաւունք, որն իրապէս պարտաւորութիւն է։ Նա ձայն չունի խակական դպրոցական-ուսումնական խնդիրների մէջ, որոնք վերապահված են հոգևորականութեան և մանկավարժական մարմիններին։ Մի գիւղում է միայն արված, այն, որ հոգաբարձութիւնները հրաւիրում են ազատ ուսուցիչ, որը և կազմում է ուսուցչական խումբը. բայց դա էլ, երևի այն գիտմամբ, որ հոգաբարձութիւնն է ռռճիկ տուողը...

Իսկ թէ ինչ առարկաններ և ինչ ձևով, ի՞ր դասագրքով, թէ ինչպէս է պարապում այսինչ ուսուցիչը, ինչ է խօսվում մանկավարժական ժողովում, ինչ առարկայ հարկ կայ աւանդելու այս ինչ գիւղում ու քաղաքում, ըստ տեղական պայմանների ու պահանջների, ի՞ր առարկային քանի դաս է հարկաւոր,—վերջապէս այն ամեն հարցերը, որոնք «մանկավարժական» են համարվում, միանգամայն դուրս են մնացած հոգաբարձութեան հսկողութիւնից և նրա կոմպետենցիայից հանված են։

Ինչ և իցէ ժողովրդի ներկայացուցչութիւնը իր սահմանային դրութեան մէջ (իբրև հոգաբարձական մարմիններ), գոյութիւն ունի մեր մէջ։

Մնում է միայն աւելի ընդլայնել այդ ներկայացուցչութիւնը։ Այդ նպատակով մենք առաջարկում ենք հետևեալը։

Մեր կարծիքով, անհրաժեշտ է ազգային լուսաւորութեան գործը հանել հոգեւոր իշխանութեան իրաւասութիւնից եւ յանձնել ազգի ներկայացուցիչներին։

Մեր ծրագրով, կարելի է ծխերի և թեմերի բաժանումը պահպանել գոնէ առ այժմ յարմարութեան համար։ Ծխերից ընտրված ներկայացուցիչները կազմում են «ծխական հոգաբարձութիւններ»։ Բացի այդ, ամեն ծուխ ընտրում է մի ներկայացուցիչ, որը թեմի միւս ծխերի ընտրեալների հետ գումարվում են քաղաքում և ընտրում «թեմական հոգաբարձութիւն», կամ «թեմական ուսումնարանական վարչութիւն»։ Այս վերջինի իրաւասութեանն են ենթարկվում թեմի բոլոր կրթական հիմնարկութիւնները։

Ծխական հոգաբարձուները պարտաւոր են որոշ ժամանակամիջոցներում հաշիւ ներկայացնել թեմական վարչութեան, նախահաշիւ են կազմում ու ուղարկում այդ մարմնին ի հաստատութիւն, նրա հաւանութիւնով են կազմում ուսուցչական խումբը և ամեն մի նոր ծրագիր ենթարկում են նրա քննութեան և վաւերացման։

Ծխական հոգաբարձութիւնների իրաւական այս կախումը մենք անհրաժեշտ ենք համարում, նախ այն պատճառով, որ որոշ չափով կենտրոնացում լինի ընդհանուր ղեկավարութեան համար և, յետոյ, ուրիշ տեսակէտներից, որ մենք կը բացատրենք։

Ազգային լուսաւորութեան կառավարութիւնը կենտրոնանում է «կենտրոնական վարչութեան» ձեռքում, որն ընտրված կը լինի բոլոր թեմական ներկայացուցիչների կամ մի ուրիշ ընտրողական ձևով, օրինակ, ծխականների անմիջական—ուղղակի ձայնատուութեամբ։

Այս մարմինների ֆունկցիանները որոշելու մասին կասեմ հետևեալը.

Թեմական վարչութիւնը, որի ձեռքումն է կենտրոնանում թեմի լուսաւորութեան ամբողջ գործը, պահում է և կարգադրում իր շրջանի դպրոցական բոլոր եկամուտները։ Բոլոր ծխական ուսումնարանների գումարները պէտք է հաւաքվեն վարչութեան կասսայում. վարչութիւնը, առնելով ծուխերից գումարները, և դպրոց բանալու ծրագիրը, բացում է դպրոցը՝ հոգալով իր կասսայից բոլոր ծախսերը։ Դպրոցի տիպը որոշում է համայնքը (գիւղը կամ քաղաքը), իսկ ծախսերի քանակը որոշելը վերապահվում է վարչութեան։ Սրա նպատակն է վերացնել այն անհաւասարութիւնը, որը գոյութիւն ունի այժմ դպրոցների ապահովութեան մէջ։ Պէտք է վերանան մեր միջին «ապահով ու անապահով» ուսումնարանները և բոլորը պէտք է միաչափ ապահովված լինեն, որպէս զի մի ուսումնարանի վարժուհին չը ստանայ 50—75 ր., իսկ միւսինը, 15 ր., որպէս զի մէկը կարելիութիւն չունենայ լաւ ուսուցիչ հրաւիրելու, իսկ միւսը շռայլէ խոշոր գումարներ։

Այս անհաւասարութիւնը անտարակոյս ծագել է այն անօրմալ հանգամանքից, որ մինչև այսօր չը կայ, այսպէս ասած, «ազգային լուսաւորութեան» կազմակերպութիւն, և ուսումնարանների բացումը մի պատահական երևոյթ է, թողնված եկեղեցու կամ ծխի ցանկութեանը։ Եւ դուրս է գալիս, որ տասնեակ գիւղերում ուսումնարան չը կայ, իսկ քաղաքում մեծածախս դպրոցներ են պահվում, և այսպիսով ստուար մասսան խաւարի մէջ է մնում և իսկի յոյս էլ չունի մի օր դպրոց ունենալու։

Երբ ընդհանուր, «թեմական դպրոցական գումարկղ» կը լինի, թեմական վարչութիւնը կարող կը լինի զսպել «հարուստ» ուսումնարանների շռայլութիւնը և տնտեսած գումարներով ապահովել «աղքատ» դպրոցները կամ բանալ այդպիսիներ որտեղ չը կայ։

Բացի տնտեսական մասից, վարչութիւնը ղեկավարում է նաև զուտ կրթական գործերը։ Դպրոցի տիպը որոշում է համայնքը, բայց ուսուցման ծրագիրը մշակում է վարչութիւնը, որը հնարաւորութիւն ունի ուսումնասիրելու խնդիրը մասնագէտների հետ խորհըրդակցելով։ Ծխական հոգաբարձուները իրանց ուսուցիչների ընտրութիւնը առաջարկում են վարչութեանը ի հաստատութիւն, կամ յանձնում են նրան այդ գործը։

Անհասարակ այնպէս պէտք է կապել ծխական և թեմական վարչութիւնները, որ ամեն գործ կատարվի փոխադարձ համաձայնութեամբ։ Թեմի հասարակութիւնը կը ճանաչի վերջապէս մի ընտրված մարմին, որին կը դիմէ կարևոր պարագաներում։ Մինչև այժմ թեմի կրթութեան ղեկը գտնվել է թեմական առաջնորդի ձեռքում և այդ սիստեմը այժմ սնանկացած է, ժամանակ է այդ ղեկը վերադարձնել ժողովրդին ի դիմաց իր ընտրեալ մարդկանց։

Մենք մեծ յոյսեր ենք տածում բեմիմ այս փոփոխութիւնից։

Մեզ կը պատասխանեն անշուշտ, թէ հոգաբարձուները ընդհանրապէս քիչ են հետաքրքրվում ուսումնարանի հարցերով, թէ նրանք մեծ մասամբ ծանօթ չեն դպրոցական խնդրին, մանկավարժութեանը, բայց չէ՞ որ դա ընտրողութեան ներքին պակասութիւնն է, չէ՞ որ դա առաջ է գալիս այն հանգամանքից, որ հոգաբարձուների իրաւունքները սահմանափակ են կամ աւելի ճիշտ ասած, նրանք պարտականութիւններ միայն ունեն և ոչ մի իրաւունք։ Վերջապէս ինչի ուրանանք, որ ինչ և իցէ դարձեալ նրանք են դոնէ դուռ ընկնում և պահպանում «անապահով» ուսումնարանները։ Երբ կը մտցնվի մեր առաջարկած սիստեմը, երբ ծխական հոգաբարձուն կը տեսնէ, որ ինքը մի օղակ է ընդհանուր ազգային կազմակերպութեան շղթայի մէջ, ունի որոշ իրաւունքներ և որոշ պարտականութիւններ, երբ նա կը հասկանայ, որ կայ մի հոգատար, և հսկող մարմին, նոյն ժողովրդի ընտրեալներ,—այն ժամանակ նրա վերաբերմունքն էլ դէպի իր պարտականութիւնը կը փոխվի. ուրիշ կերպ չի էլ կարող լինել, քանի որ նրա գործունէութեան հաշւետուութիւնը քննութեան կառնվի թեմական վարչութեան մէջ, կը հրատարակվի թերթերում, պարտազանցութեան դէպքում, նա կը հեռացնվի և նորը կընտրվի։ Նոր հոգաբարձու կընտրվի նոյնպէս անմիջապէս մէկի հեռանալու կամ մահվան դէպքում, որովհետև կը վերանան կղերական-բիւրոկրատական ձգձգումները և «չորս տարով» ընտրութիւնների սիստեմը, որի շնորհիւ յաճախ դպրոցի հոգաբարձուներից մէկն է մնում և պէտք է սպասել չորս տարին լրանալուն՝ նոր ընտրութիւններ անելու համար։

Ինչպէս ծխական հոգաբարձուների գործունէութիւնները ենթարկվում են թեմական վարչութիւնների կօնտրոլին, նոյնպէս և վերջինս պէտք է հաշիւ տայ ծխերին (գուցէ ծխականների հոգաբարձութիւններին) իր գործունէութեան մասին։ Բացի հրապարակական հաշւետուութիւնից, վարչութեան անդամները պէտք է շրջեն իւրաքանչիւրը իր բաժնով, մի տեսակ թեմական տեսչի պաշտօնով, թէ վարչութեան գործունէութեան մասին հաշիւ ներկայացնելու, թէ տեղական պահանջներին ծանօթանալու և թէ ուսումնարանը վերաքննելու համար։

Բացի այդ, թեմական վարչութիւնները պարտաւոր են հաշիւ ներկայացնելու պարբերաբար «կենտրոնական վարչութեանը», որի ձեռքումն է ազգային կրթութեան գործի ղեկը։ Սա է որ հսկում է թեմական վարչութիւնների գործունէութեան վրա, այստեղ են մշակվում և վաւերացվում թեմերին վերաբերեալ ընդհանուր դրամական և կրթական խնդիրները։

Թեմապատկան գումարներից մի որոշ տոկոս մտցնվում է կենտրոնականի գանձարանը, և գործ է դրվում ընդհանուր ազգային լուսաւորութեան վերաբերեալ կարիքների վրա, օրինակ ձեռնարկներ տպագրելու, մասնագէտներ հրաւիրելու մասնագիտական որ և է դպրոց հիմնելու համար, վարչութեան մէջ ծառայողներին վարձատրելու, ուսումնարանական ժողովներ գումարելու և այլն։ Այս վարչական մարմինն է, որ պէտք է լիազօրութիւն ունենայ կշռելու բոլոր թեմերի կրթական կարիքները, հարուստ թեմերի գումարներից ծախսել աղքատ թեմերի վրա։

Այս է, մեր կարծիքով, ուսումնարանական վարչութեան ցանկալի այն ձևը, որը կարող կը լինի թէ ապահովելու լուսաւորութեան զարգացումն թէ տնտեսական հաւասարութիւն սահմանելու դպրոցների մէջ, թէ ուսումնարաններ բանալու աղքատ համայնքներում թեմական ֆոնդերի միջոցով, թէ սերտ կերպով կապելու ուսումնարանը ժողովրդի հետ և ծխական ու թեմական վարչական մարմինները կենտրոնական վարչութեան հետ։

Վ. Արծրունի

ՆԱՄԱԿ ԱԼԷՔՍԱՆԴՐՕՊՕԼԻՑ

Մարտի 27-ին

Գողութիւնը, որը պատժելի ու պախարակելի է համարվում օրէնքի և հասարակութեան բարոյական հասկացողութեամբ, այսօր երևան է գալիս մեզ մօտ մի այլ կատարելագործված ձևակերպութեամբ, որի ամբողջ ճարպիկութիւնը, սովորականին հակառակ, այս անգամ հիմնված է ոչ այնքան գաղտագողի գործելու պրօֆեսիօնալ հնարագիտութեան, որքան նոր տեսակի յայտնագործութեան վրա, որի սկիզբը դրվեց մօտ օրերս Թիֆլիսում և Բագւում ու էլէքտրական արագութեամբ հասաւ մեզ մօտ։

Այսպէս, մարտի 25-ին, շաբաթ երեկոյեան 4 անյայտ անձնաւորութիւններ՝ հագնված այլ և այլ պաշտօնական տարազներով (դատախազի, օֆիցէրի և այլն) կառքով և թիկնապահ ձիաւորներով մտնում են Բաշ-Շորագեալ գիւղը, որ այստեղից 2 ժամվայ ճանապարհով հեռու է և գտնվում է Կարսի շրջանում։ Նրանք կանչում են գիւղի տանուտէրի օգնականին, քահանային և այլ ազդեցիկ մարդկանց ու յայտնում իրանց առաքելութեան մտադրը, այսինքն՝ թէ եկել են գիւղացիներին խուզարկելու համար, լսելով որ գիւղում կեղծ դրամներ գոյութիւն ունին։ Առաջին անգամ նրանք խուզարկում են հարկահաւաք—օգնականի տունը, նախօրօք գիտենալով, որ նրա մօտ գտնվում է մօտ 1,500 ր. պետական հարկագրամ, և առարկելով՝ թէ այդ փողերը կեղծ են, կազմում են մի ձևական արձանագրութիւն ամեն մի կպակած փաթաթելու համար և փողերը փոխադրում իրանց պայուսակը։ Նոյնը նրանք կատարում են գիւղի յայտնի հարուստ ինչ-որ Արշակ անունով մի պարոնի տանը, որտեղից տանում են միայն 40 ր. կանխիկ դրամ, չը գտնելով ուրիշ ոչինչ, բացի բանկային արժէթղթերից, մուրհակներից և այլն։ Այստեղ պաշտօնական արձանագրութիւնը վերջացնելուց յետոյ, խուզարկուները նստում են նորից կառք, շրջապատված իրանց թիկնապահ ձիաւորներով, որոնց խըստիւ պատուիրված էր հսկել այդ բոլոր «մանիպուլեացիաների» ժամանակ, և վերադառնում Ալէքսանդրօպօլ։

Հայանկով Ախուրեանի կամուրջը, որը բաժանում է, իբրև սահմանագիծ, Ալէքսանդրօպօլի գաւառը Կարսի շրջանից, ձիաւորները բաժանվում են՝ ուղևորվելով դէպի մօտակայ Օջախուլ գիւղը, իսկ կառքը շտապում է քաղաք։ Թէև գիւղից հետամուտ են լինում մարդիկ, հասկանալով արդէն գործի ասառը, բայց խուզարկուները՝ պարպելով նրանց վրա ատրճանակներ, կորչում են կառքով քաղաքի միջին փողոցներում։

Այդ մասին յայտնված է տեղական ոստիկանութեան, միջոցներ ձեռք առնելու համար։ Ասում են՝ կառապաններից մէկը արդէն ձերբակալված է։

Պարզվելու է արդեօք այս նոր տեսակի գողութեան նախաձեռնութիւնը,—առ այժմ ոչինչ յայտնի չէ։

Օգտվելով հանգամանքից, աւելորդ չէր լինի ասել, որ գողութեան նոյնանման դէպքեր բազմապատկվել են վերջերս և այստեղ։ Մարդ սպանելը, առանց սեռի ու հասակի խտրութեան, մի քանի գարշեր կամ կոպէկներ փախցնելու համար, դարձել է այստեղ սովորական երևոյթ։ Քաղաքի համքարային ներկայացուցիչները տեղական գաւառապետի հետ՝ այդ եղեռնագործութիւնների առաջն առնելու համար, թէև չարիքի թարմ տպաւորութեան տակ սկսեցին ծրագիր մշակել՝ քաղաքը թաղերի բաժանելու և գիշերապահներ նշանակելու համար, բայց մինչև այժմ այդ հարցը մնում է առկախ։ Երևի սպասում են, որ չարիքը կրկնվի աւելի խիստ արտայայտութիւններով։

Արգ. Իսահակեան

ՆԱՄԱԿ ԽՄԲԱԳՐՈՒԹԵԱՆ

Շուշի, մարտի 21-ին

Խնդրում եմ խմբագրութեան, յանուն ճշմարտութեան բարի լինել տեղ շնորհելու հետևեալ երկտողիս ձեր թերթի էջերում։

«Մշակ»-ի 59-րդ համարում ոչնչութիւնից լոյս աշխարհ եկած Պ. Զաքարեանցի դէմ շատ բան կայ գրելու, բայց պատիւ չեմ համարում պարոնին հաւասարվել, այլ միայն երկու խօսքով անհրաժեշտ եմ համարում ծանօթացնել ընթերցող հասարակութեան՝ պարոնի ինչ լինելը։

Պ. Զաքարեանցը այս անգամ իմ օրօք զըրկված է առաջնորդարանի խոհանոցի փշրանքներով փորը կշտացնելուց։ Զրկված է պնակալէզի և լակէյի պաշտօնակ տարելուց և առաջնորդ ու վարդապետ շահագործելուց։ Յիշեալ բարիքները վայելելուց խապառ զրկված և այժմ ճիւաղ դարձած պարոնը՝ յուսահատական մի ճիչ արձակելով իր երկտողով, ինձ անզօր է անուանում հոլացնելու իր դաղված սիրտը։ Թող ապահով լինի պարոնը.—ժողովուրդը գիտէ և ընդունակ է գնահատելու և գործը անաչառ է գործիչի ինչ լինելը հրապարակ հանելու և ցոյց տալու անզօր կամ զօրաւոր լինելը։ Անզօր առաջնորդը անշուշտ պարոնի նման ամենազօրաւոր նեցուկ ունեցող քահանային պատժելուց կը խուսափէր, բայց ես պատժել եմ, թէև ինքը պարոնը զոդդողալով մտնելով առաջնորդարան՝ մի պաշտպանողական ճառով միջնորդութիւն է արել, որ այս անգամ բաւականանամ միայն յանդիմանելով քահանային։

Դեռ իմ էջմիածին եղած ժամանակ, անստորագիր նամակներ էի ստանում յաճախ։ Անհանուն և անյայտ նամակագրերը իբրև բարի կամեցողներ խորհուրդներ էին տալիս ինձ շարունակ, Պ. Զաքարեանցի փեսայ քահանային կոնսիստորիայի անդամութեան պաշտօն տալ, այսինքն առեւնդպըրութեան, այնինչին էկզեկուտորութեան, և իրան Պ. Զաքարեանցին՝ գրագրութեան։ Երևի զօրաւոր և կարող կը լինէի, եթէ անստորագիր նամակներին ականջ դնելով, Պ. Զաքարեանցի շնորհքը փաթաթէի գրագրութեան պաշտօն, և իր փեսայ տէր Խորէն քահանայի շնորհքով փաթաթէի անդամութեան պաշտօն։

Իսկ գալով այն խնդրին, թէ ինքը Պ. Զաքարեանցը «Տարազ»-ի թղթակից չէ, ես չեմ շեշտել, թէ պարոնը յատկապէս «Տարազ»-ի թղթակից է, այլ ընդհանրապէս առաջ եմ բերել թղթակիցներից մի քանիսին, որոնք յետին մաքերով շահագրգռված՝ ստայօդ լուրեր են հաղորդում այս ու այն թերթին։

Այսքանը բաւական համարելով, խորհուրդ կը տայի Պ. Զաքարեանցին, որ փոխանակ առաջնորդարանի խոհանոցի դրան վրա աչքը տնկելու և առաջնորդ ու վարդապետ շահագործելու, արևի տակ աշխատէր և իր օրական պարէնը և ծխախոտ ձեռք բերելու համար դրամ վաստակէր։

Աշոտ եպիսկոպոս

ՎԵՐՋԻՆ ՀԵՌԱԳԻՐՆԵՐ

Շուշից, 29 մարտի 8 ժամ երեկ.

Ամեն օր, անդադար, հայկական գիւղերից աւերված, հոգեմաշ եղած հայեր գալիս են բերելով սոսկալի լուրեր։

Տարունակվում են խառնութիւնները, բարբարոսութիւնները, տանջանքները, չարչարանքները, բռնաբարութիւնները կոզակների կողմից գաւառապետի և Երմոլաևվի ներկայութեամբ։

Ցուրտ ձմեռվայ օրերին, ձիւնի և ցեխի մէջ կանայք, երեխաներ փաթթնալով կոզակների գալուց, փախչում են անտառներ, սարեր և ձորեր։ Բնակիչները նախանձում են մահը։ Չեն կարող տանել այդպիսի ամօթ։ Ցանքերը ոչնչացվում են կարծես մորեխից։

Կոզակները ոչնչացնում են գիւղացիների բոլոր ստացուածները։ Կողոպտում են, թալանում, այրում են հայերի ձեռք բերած հարստութիւնը։ Դարևոր չէն տանտէրերը մնացին առանց ծածկի, առանց կտոր հացի և հագուստի։ Որդու ներկայութեամբ նրանք բռնաբարում են մօրը, եղբօր ներկայութեամբ քրոջ։ Սօս գիւղում մօր բռնաբարութեան ժամանակ որդին միջամտեց. կոզակները նրան այնպէս անաստուած կերպով ջարդեցին, որ երեք ժամից յետոյ նա մեռաւ։ Այդ այն գիւղն է, որ պաշտպանվում էր և դիմադրում էր թուրքերի 3000 հոգուց բաղկացած արշաւախմբի։

Մի խօսքով գիւղերում ամեն բան աւերված է, թալանված է։ Հայերը կորցրին իրանց պատիւր, փողը, հացի պաշարները, հագուստեղէնը և սան կարասները։ Հայերի դրութիւնը աննկարագրելի է։ Նրանք հաւատացած են, որ Մեծ Թագաւորը և բարի ու ողորմած Փոխարքան կը դարձնեն իրանց առանձին ուշադրութիւնը։

Խնդրում եմ փութացնել կարգադրութիւնները։ Փոխարքան վերջ կը դնէ հայ գիւղերի այդպիսի բարբարոսական աւերումներին և քայքայումներին։

Աշոտ եպիսկոպոս

ՆԵՐՔԻՆ ԼՈՒՐԵՐ

Մոսկվայի միապետականների վերջին ժողովում Պուրիշկեվիչը՝ խօսելով Կովկասի ռուսների իբր ծանր դրութեան մասին յայտնել է, որ ինքը ուղևորվելու է Կովկաս ոչ միայն ռուսներին այլ և... տեղական թաթարներին միացնելու միապետական կուսակցութեան դրօշակի տակ։ Կովկասից արտաքսված տխրահռչակ հայր Վոստորգովն էլ, ինչպէս միապետականների սիւն շարունակել է իր մարգարէ առաքելութիւնը, նկարագրելով սիրտը ցնցող պատկերներ այն սարսափների մասին, որոնց իբրև թէ ենթակայ են ռուսները Կովկասում և որի շնորհիւ ստիպված են յետ փախչել նորից Ռուսաստան—թողնելով Ռուսաստանի կատաղի թշնամիների—հայերին...

—

Այսօր, երեկոյեան ժամի 7-ին, «Թիֆլիսի արտիստիքական ընկերութեան» դահլիճում, սահմանադիր-ռամկավար կուսակցութեան բիւրօյի անդամ Պ. Մ. Կարա-Մուրզան դասախօսութիւն կը կարդայ «Բանւորական օրէնսդրութեան տնտեսական, սօցիալական և կուլտուրական նշանակութեան» մասին, հետևեալ ծրագրով. 1) ինչ է նշանակում բանւորական օրէնսդրութեան ամենամերձաւոր նպատակը—աշխատանքի պաշտպանութիւնը. ա) աշխատանքի պայմանների բարելաւումը, բ) Կապիտալի ոյժի թուլացումը, գ) աշխատող դասի ապահովելը։ 3) Բանւորական օրէնսդրութիւնը քաղաքակիրթ երկիրներում։ 4) Բանւորական օրէնսդրութիւնը, որպէս սօցիալական քաղաքականութիւն։ 5) Բանւորական օրէնսդրութեան՝ վերջնական սօցիալ-քաղաքական իդէալը։ 6) Պետական Դուման և բանւորական օրէնսդրութիւնը։ Մուտքը 20 կոպէկ։

—

Իր ժամանակ մենք հաղորդեցինք մեր ընթերցողներին որ քաղաքային վարչութիւնը բանակցութիւններ էր սկսել քաղաքիս Ալիւրի Մէյդանի մէջ գտնվող թուրք-հայկական ընդհարման ժամանակ մի շարք այրված խանութատէրերից գնելու այդ գետինները և ընդարձակելու թէ Մէյդանի հրապարակը և թէ կոզքի փողոցը, բայց քաղաքային խորհուրդը թանկութեան պատճառով մերժեց գնելու յիշեալ գետինները, որոնց մի սաժէնը 1750 ր. պիտի նստէր քաղաքին։ Ներկայումս այդ գետնի տէրերից մի քանիսը Արշակ Ղօնդախսազեանց, Հ. Ղօնդախսազեանց և Սեսէ. Խարազեանց դիմումն են արել քաղաքային վարչութեանը և առաջարկում են իրանց պատկանեալ գետինները ծախել աւելի ցածր, քաղաքի համար նպաստաւոր գներով յիշեալ հրապարակը ընդարձակելու համար, որտեղ քաղաքի ընդարձակվելը երթևեկութիւնը մանաւանդ կառքերի, շատ դժուարացրած է։ Գետնի տէրերը պատրաստ են ստանալ արժէքը մաս-մաս, եթէ քաղաքը կը դժուարանայ գինը միանուագ վճարել։

—

Թիֆլիսի գեներալ-նահանգապետի կարգադրութեամբ արտաքսված «Ցնօրիս-Փուրցելի» թերթի խմբագիր-հրատարակիչ Ա. Գ. Ջաբադարին ապրելու է Դուշեթի գաւառի Մցխեթ աւանում։

—

Լուր է պտտում, որ գնդապետ Նէյգիթաուերը վճռել է ճանապարհի հաղորդակցութեան մինիստրի Թիֆլիս եկած ժամանակ խնդրել ազատելու իրան Անդրկովկասեան երկաթուղիների ժամանակաւոր կառավարչի պաշտօնավարութիւնից։

—

Բագւից հաղորդում են «Кавк. Мысль» թերթին, որ այնտեղ կալանաւորված է Անդրկովկասեան երկաթուղու նաւթանցքներից սիստեմատիք կերպով նաւթի գողութիւն կատարող աւազակախմբի պարագլուխներից մէկը՝ Ջաֆար-Հաջի-Իւսուֆ-օղլին։

—

Թիֆլիսի դումայի ձայնաւոր և երկաթուղու վարչութեան մատերիալնի մասի ծառայութեան կառավարչի օգնական Ալէքսանդր Եւանգուլեանցը, որ երկու ամիս է արդէն գտնվում էր բանտում իբրև գործադուլային կոմիտետի անդամ լինելու համար, այժմս ազատվել է բանտից 5000 րուբլու գրաւականով։

—

Վերջին աղէտեալների օգտին ստացել ենք. 1) Թախտաբազարի գործակատարներից Բախշի Մարտիրոսեանի միջոցով 33 ր., 2) Նիժնի-Նովգօրօդի հայ գաղութից Դաւիթ Տէր-Զաքարեանի միջոցով 90 ր., 3) «Մուրճ»-ի խմբագրութիւնից, որ ստացել է Արշակ Գեանջեանից, Մարկոս Խաչատրեանից և Վ. Արշակունուց 3 ր., 4) Սամարից—Ա. Թարվերդեանից 10 ր. և Գ. Մուրադեանից 5 րուբլի։

—

Մեչեգից, մարտի 26-ին, «Պետ. հեռ. գործ.» հաղորդում են. «Երրորդ օրն է՝ քաղաքում տեղի ունեն խիստ անկարգութիւններ կենսական մթերքների սաստիկ թանգութեան պատճառով։ Խանութները կողոպտում և այրում են։ Այսօր խուժանը շրջապատել էր նահանգապետի գանձապահի տունը։ Սպանված և վիրաւորված են աւելի քան 26 եւրօպացիներ»։

—

Հաստատ աղբիւրներից «Г. К.» թերթը իմացել է, որ մարտի 24-ին Փոխարքայի պալատում կայացած գեներալ նահանգապետների խորհրդակցութեան ժամանակ, գեներալ Լեվիցկու որոշումները՝ նոյեմբերի ջարդերից առաջացած թուրքերի ու հայերի իրար հասցրած վնասների փոխադարձ վճարումի մասին, միանգամայն հաւանութիւն են գտել և պէտք է կարծել, որ շուտով կատարումի կը ստանան։

—

Մարտի 7-ին Ուֆա քաղաքում Ախունդ-Խէյրուլլահ Օսմանովի առաջարկութեամբ մուսուլմանները խորհրդակցութիւն ունեցան մուսուլման հոգևորականութեան ներկայացուցիչների մասնակցութեան հարցի առիթով Պետական Խորհրդի նիստերում։ Ինչպէս յայտնի է, փետրվարի 20-ի հրովարտակով Պետական խորհրդին մասնակցելու համար կայսրութեան ազգաբնակութիւնից պէտք է ընտրվեն 96 հոգի, որոնց թւում 6 ներկայացուցիչ ուղղափառ հոգևորականութեան կողմից, մինչդեռ մուսուլման հոգևորականութիւնը զրկված է մասնակցութեան արտօնութիւնից։ Քննելով այդ հարցը, Ուֆայի մուսուլմանները որոշեցին խնդրագրով լինել Թագաւոր Կայսրին այդ առիթով առանձնապէս։ «Հէյաթ»

—

Երեքշաբթի, մարտի 28-ին, գիշերվայ ժամի 10-ին, քաղաքիս 5-րդ մասում, Միխօտայի հրապարակում, Միրվելովի տանը երևաց հրդեհ, որը սկսվեց միջին և վերին յարկերից։ Այդ տունը ունի շատ կեցողներ, որոնք արագութեամբ սկսեցին իրանց տան կահ-կարասիքները և այլ արժէքաւոր իրեղէնները դուրս կրել փողոցը։ Օգտուելով այդ դրութիւնից, որտեղից սանս, հաւաքվեցան կողոպտիչների խմբակները և անհատաքերին միանիտ բնակիչների սեփականութիւնը։ Հրդեհաշէջների կոմանդան հասաւ մի 3/4 ժամից յետոյ և կարողացաւ հանգցնել հրդեհը իր ժամանակին։ Այրված են տան միջին և վերին յարկերը։ Տունը ապահոված է կրակից. իսկապէս վնասվողները միջի բնակիչներն են, որոնք զրկվեցան իրանց ստացուածքից։ Հրդեհի պատճառը պարզված չէ, սկսված է արդէն քննութիւն։

—

Զինւորներին բաժանելու համար ստացանք Թիֆլիսի Նորաշէնի ս. Աստուածածին եկեղեցու ծխական դպրոցի աշակերտուհիներից Ծովկազարդի կերակին՝ հաշվելուց յետոյ իրանց մէջ հանգանակած 7 ր. 93 կ.։

—

Քաղաքիս շուկայում ներկայումս մթերքները վաճառվում են հետևեալ գներով. ձուն 100-ը—1 ր. 80 կ., ռուլթիսին (սիվրիգա) ալ դրամը—20 կ. ֆունտը., ալանին (թարմը) 22—25 կ., ֆունտը, թարթը (սողրինա)—28—30 կ. ֆունտը, պանիրը սարի (հինը)—20—25 կ. ֆունտը, նորը (սակաւ է)—20 կ. ֆունտը, իւղը հալած և արդար—45 կ. ֆունտը, Սիբիրի իւղը—43 կ. ֆունտը. իւղը օր ըստ օրէ սկսել է թանգանալ Թիֆլիսում. տեղական խոզի ապխտած ազդր (օկօրօկա) նումը 23—25 կ. ֆունտը, լաւ տեսակինը—28—40 կ. ֆունտը, Վլադիկավկազինը—25 կ. ֆունտը, եփածը—30—35 կ. ֆունտը, խորոված բարձր տեսակինը—40 կ. ֆունտը, երկրորդ տեսակները—35 կ. ֆունտը, գառան միսը կշռով 25—30 կ. ֆունտը, խաւեարը լաւ տեսակը 2 ր. 20 կ. ֆունտը, ցածր տեսակները—1—20—40 կ. ֆունտը, դօշը (տեօշկա) լաւ տեսակը—40 կ. ֆունտը, ցածր տեսակը—30 կ. ֆունտը, ծնեբեկը 4—5 կապոցը —20 կ., ծախու գառներ սակաւ են բերվում մեր շուկան և երևի գները թանգ կը լինեն անցեալ տարվանից։

—

Ազնուական Կ. Ա. Ֆօն-Կուչենբախը խնդրամատոյց է եղել Թիֆլիսի նահանգապետին թոյլատրել իրան հրատարակելու Թիֆլիսում գերմաներէն լեզուով քաղաքական-հասարակական-գրական (վաճառականական և երկրագործական բաժանմունքներով) մի շաբաթաթերթ «Kaukasische Post» վերնագրով՝ և Արտուր Լէյստի խմբագրութեամբ։

—

Շուկայում գները սաստիկ ընկել են։ Ռէնտան իջել է մինչև 76 1/2-ի։ Դրա պատճառը ոմանք բացատրում են սահմանադիր-ռամկավարների փառաւոր յաղթութեամբ, որ շատ վհատեցրել է բանկերի և բանկային տների պարագլուխներին, որոնք ամբողջովին պատկանում են առևտրա-արդիւնաբերական և Միութեան կուսակցութիւններին։ Իսկ ուրիշները աւելի գործնական բացատրութիւն են տալիս. նոր փոխառութիւն անելը Պարիզում, որ աշխատում է կառավարութիւնը, պատճառ կը լինի 5% արժէքաթղթեր բաց թողնելու այնքան ցած գներով, որ դրա մօտ նոյն իսկ ներկայ րէնտայի գնահատութիւնը չափազանց բարձր կը լինի։ Խօսում են 5%-եան նոր րէնտայի մասին 89-ի գնով 100-ի փոխարէն, որ պատճառ կը դառնայ 4%-եան րէնտայի անդարձ ընկնելուն։

—

Թիֆլիսի փոխադարձ վարկի ընկերութեան 1812 անդամներից առ 1-ն յունվարի 1906 թ. յատկապէս առևտրական դասակարգից 1034 հոգի են, իսկ 778 հոգին պատկանում են այլ և այլ դասակարգին։ Այդ անդամներից 1669 հոգի ապրում են Թիֆլիսում, իսկ 143 հոգի օտարաքաղաքացիներ են։ Ներկայ 1906 թ. ծախքը նախահաշւով նշանակած է 62000 ր։ Հարկաւոր ենք համարում յիշել այստեղ մի անյարմարութիւն, որը տարեց տարի նկատվում է այդ ընկերութեան վարչութեան մէջ. տարեկան ընդհանուր ժողովին ապագրված հաշիւը՝ ընկերութեան գործունէութեան վերաբերութեամբ, բաժանվում է անդամներին նիստը բացվելուց մի ժամ առաջ, իսկ խորհրդի գործունէութեան վերաբերութեամբ տպագրած թերթիկները բաժանվում են միմիայն այն ժամանակ, երբ անդամները նստում են դահլիճում և նիստը բացվում է. վերջապէս վարչութեան գործունէութեան վերաբերութեամբ կարդացվում է գրաւոր զեկուցումն միայն նիստի ժամանակ։ Այս սիստեմը իրաւամբ շատերին անյարմար կացութեան մէջ է դնում և անդամները միջոց չունեն, ինչպէս հարկն է, վաղօրօք ծանօթանալ ընկերութեան հաշիւների և գործունէութեան հետ, որ նիստի ժամանակ իրանց նկատողութիւնները անեն։ Հարկաւոր է այս հնացած և անյարմար սիստեմը փոխել և մի շաբաթ առաջ բոլոր 3 հաշիւները և զեկուցումները առանձին տպագրելով ուղարկել բանկի ծառաների ձեռքով անդամներին։ Ընկերութիւնը, որը 35 տարի իր գոյութիւնը կարողացել է պահել անաղարտ, չը պէտք է քաշվի այդ յարմարութիւնը տալու իր անդամներին։

—

«Могил. Гол.» թերթում կարդում ենք հետևեալ հետաքրքիր նկատողութիւնը. «Զաուսի գաւառապետը կալանաւորեց պ. Պօլօնսկուն։ Վերջինս խնդրեց նրան թոյլատրել հեռագրելու Պետերբուրգ իր ծանօթ Շչեգլօվիտովին, որ ինքը, Պօլօնսկին, կալանաւորված է Զաուսում և չէ կարող ժամանակին Պետերբուրգ գալ։ Գաւառապետը թոյլատրեց, բայց մի և նոյն ժամանակ ինքն էլ հեռագրեց Պետերբուրգի ոստիկանութեանը, որ անհրաժեշտ է խուզարկել պ. Շչեգլօվիտովին։ Ինչպէս զարմացաւ Պետերբուրգի ոստիկանութիւնը, երբ ստացվեց հեռագիրը խուզարկելու... արդարադատութեան մինիստրի օգնականին։ Յայտնի չէ ինչ միջոցով Պետերբուրգի ոստիկանութիւնը կատարեց իր վրա դրված դժուար պարտականութիւնը, յայտնի է միայն այն որ Զաուսի գաւառապետի այդպիսի վճռականութեան մասին յայտնեցին Մօգիլևի նահանգապետին, որի հետևանքը այն եղաւ, որ գաւառապետին փոխադրեցին մի ... ուրիշ տեղ»։ Սա էլ անձի անձեռնմխելիութեան թիւրիմացութիւն է եղել միայն...

—

Ամնիստիայի մասին եղած լուրերը աւելի յամառ բնաւորութիւն են ստանում։ Ինչպէս այժմս հաղորդում է «Пет. Газ.» թերթը, ամնիստիան անմիջապէս կը հրատարակվի ապրիլի ամսում, Պետական Դումայի գումարվելուց առաջ։ Իսկ եթէ որ և է բարդութիւններ տեղի չունենան, հաւանական է նոյն իսկ, որ նա յայտարարվի Զատկի առաջին օրը։

—

Պարիզից հեռագրում են «Наша Жизнь» թերթին. «Սպիրիդոնովայի գործը յուզել է Ֆրանսիայի հասարակական կարծիքը։ Շարժում է կազմակերպվում պահանջելու ներումն շնորհել բռնութեան զոհին։ Նախաձեռնողներն են նշանաւոր ռօմանիստ եղբայրներ Մարգըրիտ»։

—

Երէկ «Кавказъ» լրագիրը առաւօտեան լոյս չը տեսաւ։ Քաղաքում տարածվեցին զանազան լուրեր այդ առիթով։ Սակայն պարզվեց, որ պատճառը տպագրական հանգամանքներն են եղել, լրագիրը բաժանվեց երեկոյեան։

—

«Русск. Вѣд.» թերթը հաղորդում է, որ Բարձրագոյն հրամայված է 1906 թւի աշնանից բանալ բժշկական ֆակուլտետներ Մօսկվայի իգական բարձրագոյն կուրսերին կից։

—

Աբօյում կայացել է սօցիալ-դեմօկրատական կուսակցութեան բանւորների հսկայական միտինգը։ Մշակել և ընդունել են մի ռեզօլիւցիա, որով պահանջում են գումարել հիմնադիր ժողով, ուղղակի և հաւասար ձայնատուութեամբ, մշակելու Ֆինլանդիայի համար միապալատեան ժողովրդական ներկայացուցչութեան ծրագիրը։ «Б. В.»

—

Հայր Իօանն Կրօնշտատսկու վրա յարձակվողի անձնաւորութիւնը պարզվել է. նա Կալուգայի նահանգի մի գիւղացի է Դմիտրիեւսկին ազգով. նա յարձակվել է փայտով հարուած տալու Կրօնշտատսկուն հետևեալ խօսքերով՝ «Մինչև երբ դուք պէտք է յիմարացնէք մարդկանց»։ Դէպքի մասին քննութիւն է կատարվում։

—

Նարօպալվից լրագիրներին գրում են, որ տեղական իշխանութեան պահանջով Պետերբուրգից 5 հատ պուլեմետ են ուղարկել Նարօպալվ։ Ցաման լուրեր են պտտում, որ տեղական ինտելիգենցիային և հրէաներին պէտք է ջարդեն։

ՈՍՏԻԿԱՆԱԿԱՆ ՏԵՂԵԿՈՒԹԻՒՆՆԵՐ

Քաղցրբերձէնի խանութ ունեցող Վիկտոր Գեէներ, որ բնակվում է Կիրօչնի փողոցի վրա, յայտնեց ոստիկանութեանը, որ մարտի 25-ին, ցերեկվայ ժամը 4-ին, նա ուղարկեց իր կառապանին խոտ առնելու. Կառապանը դուրս եկաւ տանից ֆուրգօնով, նա կանգ առաւ Ալէքսանդրօվսկի փողոցի վրա և մտաւ Շուքի գործարանը փող մանրացնելու։ Այդ ժամանակամիջոցում մի անյայտ մարդ քշել է ձին ու ֆուրգօնը և մինչև այսօր չէ գտնված։ Ձին սպիտակ է, իսկ ֆուրգօնը գերմանական ձևի և ներկված է կանաչ գոյնի ներկով։

Մարտի լոյս 29-ի գիշերը 3-րդ քաղաքամասի գորոդովոյը ձերբակալեց Դուշէթի բնակիչ Իոսիֆ Դօչիշվիլին, որը փորձ էր անել կոտրելու Մեծ-փինթի փողոցի վրա գտնվող ժամագործի խանութը։

Մարտի 28-ին, գիշերվայ ժամը 12-ին, Լեվանովսկի պերէուլկայի վրա գտան 70 տարեկան ծերունի—Ադոլֆ Ֆ. Ադամիձէին, ուշաթափ վիճակի մէջ, որը իսկոյն ուղարկվեց Միքայէլեան հիւանդանոցը, բայց ճանապարհին մեռաւ։

—

Մարտի 28-ին, 4-րդ քաղաքամասի գորոդովոյը ոստիկանատուն բերեց երկու անյայտ մարդկանց և զեկուցեց, որ դրանք դրօգով Ստարո-Բեբուտովսկի փողոցով տանում էին մէկ կնոջ դիակ։ Հարցուփորձից յետոյ անյայտներից մէկը իրան անուանեց տեղացի Ծաքուլ Իգիթեանց, իսկ միւսը Բաժա գաւ. Զկմալի գիւղացի Վասիլի Ումրաձէ։ Նրանցից առաջինը բացատրեց, որ մեռածը նրա հարազատ մայրն է, Մակա Իգիթեան և ուխտի համար տարել է «Ուծօ» եկեղեցին (Կօջօրի մօտ). այնտեղ 2 շաբաթ մնալուց յետոյ իրան հիւանդ զգաց և խնդրեց տուն վերադարձնել, բայց ճանապարհին վախճանվեց։ Մեռածի դիակը ուղարկվեց Միքայէլեան հիւանդանոցը որոշելու մահվան բնական լինելը։

ԱՐՏԱՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ԻՏԱԼՕ-ԳԵՐՄԱՆԱԿԱՆ ՊԱՐԸ ՏՐԻՊՈԼԻՍԻ ՇՈՒՐՋԸ

Սուլթան Համիդը կորցրել է մի անգին աշխարհ։ Աֆրիկայում նրա ձեռքից յաջորդաբար դուրս է եկել, իր դաւաճան վարչութեան շնորհիւ, հարուստ Եգիպտոսը, Նուբիան, Սուդանը, Դար-Ֆուրը, որոնց կուլ է տուել Անգլիան, և Տունիսը, որ մարսել է Ֆրանսիան։ Աֆրիկայում, դժբախտ Թիւրքիայի ձեռքը մնացել է միմիայն Տրիպոլիսը, մի խոշոր երկիր, որը՝ Համիդը փոխանակ շէնացնելու, դարձրել է մի աքսորավայր։ Բայց, որովհետև Թիւրքիան հանդիսացել է, իր խեղճ բռնակալութեան պատճառով, իր ազգակործան ռէժիմի շնորհիւ, մի իսկոյն պատառ Եւրոպայի անյագ ախորժակի համար, Իտալիան, իբրև Տրիպոլսի հանդիպակաց եւրոպական պետութիւնը, Հաբէշիստանից առած դասից յետոյ, աչքը գցել է սուլթանի աֆրիկեան այդ վերջին ստացուածքի վրա, սպասելով, որ յարմար առիթով գցէ և ձեռքը։ Բայց ահա, յանկարծ, Գերմանիան գալիս է, անկասկած, ի հաշիւ իր ստամոքսի, խանգարելու Իտալիայի վաղուց ի վեր փայփայած երազները։ Նա ուղարկել է Տրիպոլիս մի գիտական, ռազմական արշաւախումբ ուսումնասիրելու (?) երկիրը։ Ալժեզիրասի կոնֆերենցիան դեռ ևս իր նիստերը չը փակած, մարօկեան փշոտ հարցը դեռ ևս վերջնականապէս չը կարգադրված, Գերմանիան հետամուտ է լինում Միջերկրականի վրա մի յենակէտ ստեղծելու ցանկութեան, նա վերստին կանգնում է, իբրև «ապահովական պաշտպան» իսլամական... ժառանգութեան։ Գերմանիայի այդ քայլը, ինչ ասել կուզէ, վրդովել է Իտալիային, ինչպէս մի քար, լճացած ճահճը։ Ամեն մարդ քաղաքագիտական աշխարհում գիտէ, թէ ինչ է նշանակում «գիտական ու ռազմական» արշաւախումբ ուղարկել մի երկրի «ուսումնասիրութեան» համար։ Դա կոչվում է, դիւանագէտների խորհրդաւոր ու ննդամիտ բարբառով. «խաղաղ թափանցման» քաղաքականութիւն։ Գերմանիան ուղարկում է իր գիտուններին, իր ռազմականներին, որպէս զի նրանց հետից մտնեն Վիլհելմի սիրելի թնդանօթները, հսկելու և պաշտպանելու խաղաղ ռազմականների «գործունէութիւնը»։

Ցանկալի եկած Իտալիան—ի հարկէ, Իտալիա ասելով մենք հասկանում ենք տիրապետող և շահագործող դասակարգերը, պաշտօնական ու վարող շրջանը, որովհետև խեղճ իտալացի պրոլետարիատը, ինչպէս ամեն ազգի պրոլետարիատ, ոչ մի շահ չունի այդ արիւնի ու յափշտակութեան քաղաքականութեան մէջ,—անախորժ անակնկալի առաջ աչքերը բաց արած Իտալիան, իտալական «ազգասէր» մամուլը բառ չէ գտնում իր զայրոյթն ու դժգոհութիւնը արտայայտելու համար իր «զինակցի» դէմ։ Գերմանական դաւաճանութիւնը սաստիկ վրդովել է Իտալիային մանաւանդ այն պատճառով, որ Վիլհելմ II-ը, երրեակ զինակցութեան նորոգման ժամանակ Իտալիային պաշտօնապէս խոստացել է համակրական աչքով նայել Հռոմի կառավարութեան գործողութիւններին, Տրիպոլսում։

Հետևաբար պարզ է, որ երրեակ զինակցութիւնը, Գերմանիայի, Իտալիայի և Աւստրիայի մէջ, կրում է մի ուժգին հարուած այս դէպքով։

Եւ իրաւ, ինչպէս Հռոմից հեռագրում են «Temps» լրագրին, այս րոպէիս Ալժեզիրասում հոգեարքի մէջ է, ոչ թէ կոնֆերենցիան, այլ երրեակ զինակցութիւնը։ Ու իտալական մի թերթի հաւաստիացումների համաձայն, գուցէ մենք շուտով հանդիսատես լինենք այդ դաշնակցութեան քանդումին և նրա աւերակի վրա մի նոր զինակցութեան բարձրացումին—Անգլիայի, Ֆրանսիայի, Իտալիայի, Սպանիայի և Պորտուգալիայի միջև։

Եւ արդարև, ինչ կապ կարող է այսուհետև միացնել Գերմանիային և Իտալիային, քանի որ վերջինը զինակցել էր առաջինի հետ պարզապէս նրա համար, որ վախ ունէր Ֆրանսիայից, վախենում էր, որ մի գուցէ կաթոլիկ եկեղեցու «անդրանիկ դուստրը», մի օր, եկեղեցածութեան տենդից բռնված՝ յարձակվէր Հռոմի վրա, «յաւիտենական քաղաքը» մտցնելու Պետրոս առաքեալի վաւերական յաջորդի մականի տակ։ Բայց այժմ այդ վախը ցնդած է, քանի որ «անդրանիկ դուստրը» ինքը ուրանում է իր զօրովագութ հօրը, նրան հալածում։

Ուրեմն Գերմանիայի դաշնակցութիւնը այլ ևս ոչ մի raison dêtre չունի։ Ընդհակառակը Իտալիայի համար առաջ են եկել աւելի ցանկալի ու արդիւնաւէտ դաշնակիցներ. Անգլիան և Ֆրանսիան։

Ահա ինչու Իտալիան բացարձակ ու անկեղծօրէն պաշտպանեց Ֆրանսիային, Ալժեզիրասում, իր «զինակցի» դէմ։ Եւ այդ յանդգնութիւնը՝ մեկուսացած, նոյն իսկ «հաւատարիմ սիրահար» Ռուսաստանից ագամկալի կերպով լքված Գերմանիայի ներվերը ցաւագնօրէն գրգռեց։ Գերմանական մի օրգան, «Tagliche Rundschau» մելամաղձոտութեամբ նկատում է, որ մինչդեռ Անգլիան, Ռուսաստանը և Սպանիան հակվեցին դէպի Ֆրանսիան, Իտալիան արձակ, համարձակ «անցաւ թշնամու կողմը»։ Արդեօք դա զինակցութեան վերջն է, հարց է տալիս թերթը։ Եւ այն յայտն է փայփայում, որ Ալժեզիրասի կոնֆերենցիայից յետոյ ռայխստագը մի քանի անհրաժեշտ բացատրութիւններ կը պահանջէ Բիւլովից, այս մասին։

Եւ առ այժմ, իբրև պատասխան Իտալիային, Վիլհելմ վեհանձնօրէն մի արշաւախումբ է ուղարկում Տրիպոլիս «պաշտպանելու» Իսլամը։

Ու ինչպէս ենթադրում են, Գերմանիայի այդ քայլը կատարված է Աբդիւլ Համիդի բարեհաճ հաւանութեամբ։ Կարմիր մարդը մտածում է. այսօր կամ վաղը պէտք է կուլ իմ այդ վերջին ստացուածքը Աֆրիկայում։ Ե՞ն գոնէ թշնամին ուտելու, թող բարեկամը անուշ անէ։

Բայց, ի հարկէ, Համիդը այնքան յիմար չէ, որ ձրի ծախէ Օսմանեան հայրենիքի այդ կտորը։

Նա Վիլհելմից անպայման ստացած կը լինի խոստում, թիկունք լինելու իրան, իր հայրենազաւ ռէժիմին,—երբ կարիք ունենայ Թիւրքիայի «թշնամի»-ների դէմ գործելու. մի նոր հայկական ջարդ սարքելու, կամ Երիտասարդ Թուրքերին Բոսֆորը թափելու...

Տ. Զաւէն

ԱՐՏԱՔԻՆ ԼՈՒՐԵՐ

ԱՆԳԼԻԱ

Բանւորական դաշնակցութիւնների պատասխանատւութիւն.—Կառավարութիւնը ներկայացրել է պարլամենտի քննութեան մի նոր օրինագիծ, որ ապահովում է բանւորական դաշնակցութիւնները այն քաղաքացիական պահանջներից, որոնք առաջ են գալիս դաշնակցութիւնների անդամների ապօրէն գործողութիւններից։ Բանւորական դաշնակցութիւնների պատասխանատուութեան հարցը ծագեց 1901 թ. նրանից յետոյ, երբ մի ընկերութիւն պահանջ ներկայացրեց դատարանի միջոցով մի բանւորական դաշնակցութիւնից այն վնասների համար, որ այդ ընկերութիւնը կրել էր գործադուլներից։ Դատարանը գոհացում տուեց այդ պահանջին։ Այդ օրից բանւորական պատգամաւորները մի քանի անգամ մտցրին պարլամենտ օրինագծեր այն նպատակով, որ բանւորական դաշնակցութիւններին պատկանող դրամագլուխները պաշտպանված լինեն։ Սակայն այդ օրինագծերը ոչ մի արդիւնք չունեցան։

Այժմ նոր կաբինետը մշակեց մի նոր օրինագիծ և ներկայացրեց պարլամենտի քննութեան։ Այդ օրինագիծը լիովին գոհացում չէ տալիս բանւորներին, ուստի նրանց ներկայացուցիչները պարլամենտում ներկայացրին իրանց հակա-ծրագիրը, որը հաւանօրէն, կընդունվի պարլամենտից։

Հարցապնդումն Լօրդերի պալատում հրեաների մասին։ Լօրդերի պալատում Լօրդ Նօրդբրուկը հարցապնդում արեց, թէ արդեօք կառավարութիւնը կը հրատարակէ հիւպատոսական և այլ պաշտօնական զեկուցումները այն հալածանքների մասին, որոնց ենթարկվում են հրեաները Ռուսաստանում։ Լօրդ Ֆից-Մօրիս ցոյց տուեց, որ այդ տեսակ վարմունքը շատ էլ յարմար չէ։ Կառավարութիւնը չէ կարող հրատարակել դօկումէնտներ այդ առարկայի մասին, չը հրատարակելով միաժամանակ այն դօկումէնտները, որոնք ցոյց են տալիս, թէ ինչ դժուարութիւնների մէջ էր դրված ռուսաց կառավարութիւնը ռէֆօրմները մտցնելու առիթով։ Ամենքը ցանկանում են, որ դադարվի հրէաների հալածանքը, ինչպէս և ամենքը ցանկանում են աջողութիւն բոլոր մեծ ռէֆօրմներին, որոնց ճանապարհի վրա ոտք է կոխել ռուսաց կառավարութիւնը և որոնք, պէտք է յուսալ, դադարեցնել կը տան հրէաների հալածանքները։ Կենտրօնէրի արքեպիսկոպոսը և Մարքիզ Լանդսդօուն, ընդունելով, որ Անգլիան համակրում է հրէաների տանջանքներին, հաւանութիւն տուին Ֆից-Մօրիսի այդ հարցում բռնած դիրքին։

ՖՐԱՆՍԻԱ

Ոստիկանութեան վերակազմութիւնը։ Ֆրանսիական ներքին գործերի նոր մինիստր Կլեմանսօն, ըստ երևոյթին հակված չէ, ոստիկանական ծառայութիւններ մատուցանել օտար, թէկուզ նոյն իսկ «բարեկամ» պետութիւնների կառավարութիւններին։ Դրա համար հարկաւոր է դառավել ամենից առաջ վերանորոգել գոյութիւն ունեցող բարձր պետական ոստիկանութիւնը և ռէֆօրմները արդէն սկսվել են այդ ուղղութեամբ։ Այդ նպատակով երկար տարիներ ոստիկանական դեպարտամենտի կառավարիչ Կավիարը արձակվեց պաշտօնից և նրա տեղ նշանակվեց Նախկին պրեֆեկտ Հենարը։ Մինիստր Կլեմանսօն նրա օգնութեամբ մշակեց ոստիկանութեան համար նոր հրահանգ, որի գլխաւոր կէտն այն է, որ այսուհետև ոստիկանութիւնը պէտք է հրաժարվի որ և է յարաբերութիւնից ռուսական և թիւրքական գաղտնի ոստիկանութիւնների և նրանց Պարիզի գործակալների հետ և դադարեցնի հսկողութիւնը ռուս և թիւրք էմիգրանտների վրա, իբրև անձնաւորութեան ազատութեան սկզբունքին անհամապատասխան մի գործ։

«ՄՇԱԿԻ» ՀԵՌԱԳԻՐՆԵՐ

ՊԵՏԵՐԲՈՒՐԳԻ ԳՈՐԾԱԿԱԼՈՒԹԻՒՆԻՑ

28 մարտի

ԲՈՒԴԱՊԵՇՏ, 27 մարտի։ Լուրերին նայած, մինստր-նախագահ Վէկէրլէն սահմանադիր կուսակցութեան անդամ է դարձել։

ՊԵՏԵՐԲՈՒՐԳ, 27 մարտի։ Հրատարակված է Բարձրագոյն հաստատված Պետական Խորհրդի որոշումը՝ քրէական օրինագծի մի քանի կէտերը 1905 թ. ապր. 17-ի ուկազի հետ համաձայնեցնելու մասին, կրօնական համբերատարութեան սկզբունքները ամրապնդելու և քրէական նոր պատժագրքի երկրորդ գլուխը գործադրելու համար։

ՆԷԱՊՕԼ, 27 մարտի։ Վէզուվի շրջակայքից հասնում են հանգստացուցիչ տեղեկութիւններ։ Լրագրների ասելով, փախստականների թիւը հասնում է 150,000-ի։

ԼԱՆ, 27 մարտի։ Հանքահորերի հրդեհը տարածվում է շարունակ։ Ենթադրում են, որ թերևս աշխատանքները վերսկսվեն։

ԲԷԼԳՐԱԴ, 27 մարտի։ Ոստիկանութիւնը արգելել է պարոններին՝ տպելու հակա-դաւադիրների լրագրները։ Խմբագիրների կոմիտէտը կառավարութեան բողոքեց, առարկելով որ դրանով խախտվում է սահմանադրութիւնը և մամուլի ազատութիւնը։

29 մարտի

ՊԵՏԵՐԲՈՒՐԳ, 27 մարտի։ Պետական Դումայի համար ընտրված են Կօստրօմում՝ նահանգական զեմստվօյի ձայնաւոր Սաֆօնօվը, մի սահմանադիր-ռամկավար, մի երդուեալ հաւատարմատար և Ֆրէնկէլը, զեմստվոյին բժշկական բիւրօյի կառավարիչը.—վերջին երկուսը ազատամիտներ են և հեռաւորներ։ Նիժեգորոդում քաղաքային ընտրութիւններին ընտրվել են առաջադիմականները, Կազանում՝—5 թաղամասերում 45 սահմ.-ռամկ. և 12 հոկտ. կուսակիցներ, Խարկովում և Ակկերմանում ընտրվել են երկրորդ անգամ առաջադիմականները։

ԹԷՀՐԱՆ, 27 մարտի։ Մի հարիւրակ կազակ շտապով պատրաստվում է Թէհրանից մեկնել Խորասան՝ կարանտինական սահմանատուն կազմելու—Սէյիստանից ապահովացոյց տախտի առաջն առնելու համար։

ԼՈՆԴՈՆ, 27 մարտի։ Համայնքների պալատը առաջին ընթերցումից յետոյ ընդունեց դպրոցների դաստիարակութեան օրինագիծը։ Պահպանողականները խօսեցին հակառակ օրինագծի առարկելով, թէ նա ընդունելի չէ կրօնի մէջ։ Կառավարական կուսակցութեան հռետորները պաշտպանեցին օրինագիծը։

Կ. ՊՕԼԻՍ, 27 մարտի։ Սերբ կառավարութիւնը յայտնել է Բ. Դռան առաջարկած ռազմական կոնվէնցիայի փոփոխութիւնները։ Կոնվէնցիան նախ յանձնվելու է մինիստրների խորհրդին, և ապա սուլթանի հաստատութեան։

ՕԴԵՍՍԱ, 27 մարտի։ Զինուորական դատարանը կախաղանի դատապարտեց Օդեսսայի զումարտակի սահմանային պահնորդութեան պահակ Միխայիլ Իգնատիեվին, որ մեղադրվում է մի կնոջ և նրա երեքամեայ երեխային սպանելու և մի ուրիշ կնոջ վէրք հասցնելու մէջ, երբ վերջինս մերժել էր տալ 25 կոպեկ, իր մօտ չը լինելու պատճառով։ Ոճրագործութիւնը տեղի է ունեցել Դնէպրովսկի գաւառում, ուր ուղարկված էր Իգնատիեվը՝ պաշտպանելու կալւածատիրական գոյքերը ագրարային անկարգութիւններից։

ԼՈՆԴՈՆ, 27 մարտի։ Համայնքների պալատում—Հասգի կոնֆերէնցիայի առիթով արած հարցապնդումին մինիստր-նախագահը յայտնեց. «Չեմ կարող ասել, կաջողվի՞ արդեօք իրականացնել այն առաջարկութիւնները, որ վերաբերում են սպառազինումը սահմանափակելու հարցին. յամենայն դէպս Բրիտանական կառավարութիւնը լիովին համակրում է այդ բանին։ Բրիտանական ներկայացուցիչներ, առ այժմ չեն նշանակված։ Այդ հարցը դեռ պէտք է քննվի»։

ՆԷԱՊՕԼ, 27 մարտի։ Սան-Ջուզէպպում աստուածպաշտութեան ժամանակ եկեղեցու տանիքը յանկարծ փլվեց։ Առ այժմ ազատել են փլատակների տակից 49 դիակներ։

ՊԵՏԵՐԲՈՒՐԳ, 28 մարտի։ «Русск. Госуд.» լրագիրը հաղորդում է, որ Ֆինլանդիայի նոր սէյմի կանոնադրութեան և ընտրութիւնների օրէնքի նախագծերը քննող առանձին խորհրդակցութիւնը վերջացրել է իր պարապմունքները։ Այս տարի ծովային կադէտները օֆիցէրների պաշտօններ չեն ստանալու։ Համառուսական առևտրա-արդիւնաբերական դաշնակցութիւնը ժամանակաւորապէս դադարեցնում է իր գործունէութիւնը, որովհետև մարտի 4-ի դաշնակցութիւնների վերաբերեալ նոր օրէնքի համաձայն, նրա գոյութիւնը մարտի 28-ից համարվում է ապօրինի։ Նահանգական ընտրութիւնները վարող մասնաժողովը քննեց մարտի 30-ին, Պետերբուրգում կայացած ընտրութիւնների ճշտութեան հարցը։ Մասնաժողովը ընտրեաների ցուցակից հանեց 129 յօդ. մեղադրվող երդուեալ հաւատարմատարներ Հէսսէնին, Մարգուլիէսին և պրոֆեսոր Խօդսկուն և նրանց փոխարինեց Պերցօվով, Բրաֆանով և Լիխաչէվով։

ՊԵՏԵՐԲՈՒՐԳ, 28 մարտի։ «Русск. Госуд.»-ի ասելով, Փոխարքայի առաջարկը վերացնելու Կովկասի գիւղացիների և կալւածատէրերի միջև եղած պարտադիր կախման յարաբերութիւնները,—պէտք է քննվի Մինիստրների Խորհրդի առաջիկայ ժողովներից մէկում։ Ճանապարհների հաղորդակցութեան մինիստրը Վլադիկավկազի երկաթուղայի գծով գնում է Կովկաս, ուր մանրամասն ծանօթանալու է Անդրկովկասի երկաթուղիների վիճակի հետ, որ վերջին յեղափոխութիւնից ծանր կերպով վնասվել է։ «Русск. Госуд.» ասելով, այդտեղից մինիստրը կը մեկնի Էնզէլի-Թէհրանի գծով, ապա վերադառնալով Բաթումի վրայով մինչև Նովօրոսիյսկ, այնտեղից էլ աւտոմօբիլով ճանապարհորդելու է Սև-ծովեան եզերքով։

ՊԵՏԵՐԲՈՒՐԳ, 28 մարտի։ Ներքին գործերի մինիստրութեան զեմստվոյին բաժնի կառավարիչ է նշանակվում վերոյիշեալ բաժնի կառավարչի օգնական Լիխոմինօվը։—Աստրախանում—երեք թաղամասերում ընտրվել են սահմ. ռամկ., իսկ երկուսում՝ միապետականները։

ՆԷԱՊՕԼ, 28 մարտի։ Թափված աւազի և մոխրի ուժեղ անձրևի պատճառով, այսօր առաւօտեան փլվեց Մօնտօսլիվէտօյի տանիքը, որի տակ գտնվում էր շուկան։ Ամբողջ շինութիւնը կործանված է։ Մինչև առաւօտեան ժամի $10^1/_2$-ը փլատակների տակից հանված են 70 դիակ և 70 վիրաւորներ։

ՊԱՐԻԶ, 28 մարտի։ Արտաքին գործերի մինիստրի առաջարկութեամբ ծովային մինիստրը վճռեց անմիջապէս ուղարկել Նէապոլ Միջերկրական նաւախմբի մի մասը՝ ազգաբնակութեան օգնութիւն հասցնելու համար։

ՄՕՍԿՎԱ, 28 մարտի։ Քուէարկութեան հաշւէտուութիւնը մի քանի թաղամասերում վերջացաւ ցերեկվայ ժամի 5-ին միայն։ Երևաց, որ ամբողջ քաղաքում, 40,000-ից աւելի ընտրողներից, սահմանադիր-ռամկավարներին ձայներ են տուել 26,932, հոկտ. 17-ի դաշնակցութեան և առևտրա-արդիւնաբերականներին՝ 12,435, միապետականներին՝ 2263։ Կայացաւ հոկտեմբերի 17-ի դաշնակցութեան ժողովը՝ քննելու համար պատահած անաջողութիւնները։ Վճռված է միանալ-դաշնակցութեան գործունէութիւնը երկարաձգելու նպատակով, բաժանվել անբարեյոյս էլէմենտներից, օրինակ առևտրա-արդիւնաբերական կուսակցութիւնից և այլն։ Ժողովրդական ազատութեան կուսակցութեան կենտրօնական կոմիտէն վերջնականապէս ընտրել է որպէս Պետական Դումայի թեկնածուներ Մուրավցևին, իշխ. Պ. Դոլգորուկովին, Կոկոշկինին և բանւոր-ընտրողների մասնակցոյց արած մի ամենա բանւորի։

Խմբագիր՝ ԱԼԷՔՍԱՆԴՐ ՔԱԼԱՆԹԱՐ
Հրատարակիչներ՝ ԹԱԴԷՈՒՍ ՏԻԳՐԱՆԵԱՆ
ԻՍԱՀԱԿ ՄԵԼԻՔ-ԱՂԱՄԱԼԵԱՆ

ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ

ԱՌԱՋԻՆ ՄԱՍՆԱՒՈՐ ՀԻՒԱՆԴԱՆՈՑ
ԲԺՇԿԱՊԵՏ Բ. ՆԱՒԱՍԱՐԴԵԱՆԻ
Հիմնված 1880 թ.
(Կուկիա, Վօրոնցօվի արձանի հանդէպ)
Ամեն օր, բացի կիրակի օրերից։
ԱՌԱՒՕՏՆԵՐԸ
Բ. Ա. ՆԱՒԱՍԱՐԴԵԱՆ—11—12 ժ. վիրաբուժութեան, վեներական (սիֆիլիս) և միզական հ.
Ե. Մ. ՑԻԳՕՎԱՆԻ—$9^1/_2$—10 ժ. աչքի. ներքին և ներքրային։
Մ. Ֆ. ԱՒԵՏԻՍԵԱՆ—11—12 ժ. մորթու, վեներակ. և վիրաբուժութիւն։
Զ. Ի. ԲԱՐԱՆԱՄԵԱՆՑ—10—11 ժ. մանկաբարձութեան, կանանց և երեխայոց հ.
Ի. Գ. ԿԶԵԼԻԵՎ—12—1 ժ. ականջի, քթի և կոկորդի
Ա. Գ. ՏԱՐԱՅԵՏԵԱՆՑ—1—$1^1/_2$ ժ. ներքին և երեխայոց հ.
ԳՐՆ-ԲԺԻՇԿ Ա. Ի. ՇՏԵՐՆԻՆԱ—$1^1/_2$—3 ժ. մանկաբարձութեան և կանանց հ.
Գ. Ե. ԳՈՒՐԳԵՆՈՎ—1—2 ժ. կանանց հ. և մանկաբարձութիւն։
ԵՐԵԿՈՆԵՐԸ
Ա. Մ. ՓՈՒՂԻՆՈՎ—5—6 ժ. ներքին և երեխայոց հ. և ծաղկահատ.
Խ. Տ. ԱՐԵԱՆՑ—6—7 ժ. ներքին հիւանդ.
Բ. Ա. ՆԱՒԱՍԱՐԴԵԱՆ—7—$7^1/_2$ ժ.
Վճարը 50 կ. չքաւորները ձրի։ Համախորհրդակ (կօնսիլիում) և օպերացիայի համար առանձին։
Հիւանդանոցը վերանորոգվել է՝
բժշկապետ Բ. Նաւասարդեան

,,Գուտտենբերգ"
գրավաճառանոցում վաճառվում են դաշնամուրի համար հետևեալ ՆՈՏԱՆԵՐԸ
Բաղդասարեան. Մի լար բլբուլ. » 50
Բօյաջեան. Հայ ժողովրդական երգեր. 2 »
Բարխուդարեան. Հայրիկ-Հայրիկ. » 50
Կարա-Մուրզայի. Հայկական երգերը
Ա. տ. 1 »
Բ. տ. » » 75
Միրզայեան. Հայ ժողովրդական երգեր. » 65
Կլենովսկի. Կռունկ » 40
Վարդիկեան. Եօթն օր եօթ գիշեր. » 40
» Հայաստան » 40
» Առաջին սէր » 40
Ցովսէփեան. Ղ. ք. Բնարիկ Մանկական 1 »
Լալայեանց. Մեծ... » 30
Տրուֆֆ. Պաղ աղբիւրի մօտ. » 60
Սուր. Գարուն. «Ոհ ինչ անուշ». » 60
Պարոնբէկեան. Հազար Երանի. » 60
Калантаровъ. Варшавянка » 35
Колокавой. Счастливыя минуты » 50
Армянскій національный маршъ » 35
Корганова. «Баяти» » 60
» «Кавказская Рапсодія» » 60
» «Новое Баяти» 1 »

Գրախանութում վաճառվում են Հայկական նշանագրեր հարթակարի համար, Գ. Երիցեանի, 40 կ.
Հայ միտքը, Հ. Ս, Նրեմեանի, 1 ր. 50 կ.
Ս. Դոմինիկ կղզու դերին, Դ. Քոլօնեանի 25 կ.
Խաղամոլ, Թատերգութիւն հինգ հանդէսով, Հ. Ա. Վ. Տիրոնեանի, 25 կ.
Մկա վախ չունիմ, Գիւլխանդանցի, 15 կ.
Ցաւտանկական զրոյց, Հ. Ա. Ղազիկեանի, 1 ր.
Երկհարիւրամեայ գրականական գործունէութեան և նշանաւոր գործիչներ Վենետկոյ Մխիթարեան միաբանութեան Հ. Բ. վ. Սարգսեանի, 3 ր. 50 կ.
Միհրանոյի դագաղում, Յ, Եսայեանի, 7 կ.
Մաթէօ մատնիչը լուսեւ, 7 կ.
Հայ կայսերք Բիւզանդիոնի Ա, Հ. Հ. Կ. Տէր-Սահակեանի, 1 ր. 25 կ.
Ցարասութիւնք սաղմոսաց Դաւթի Հ. Բ. Վ. Քուչներեանի, 50 կ.
Տնտեսական զարգացման փաստերը, Բ. Իշխանեանի, 15 կ.
Մահմեդական աշխարհն ու նրա ապագան Թարգ. Բաբգէն վարդապետ 60 կ.
Պատկերներ, Ջաւախեցի 60 կ.
Զուլհակներ, Թարգ. Տ. Սրուանձեանի 40 կ.
Փուչ զաւակ գր. հինգ գործ. Գ. Ղարաջեանի 50կ.
Բու, վէպ Թարգ. Լ Շանթի, 1 ր.
Կոստանդին Երզնկացի ԺԳ. դարու ժողովրդական բանաստեղծ և իր քերթուածները Ն. Մ. Պօտուրեանի, 50 կ.
Հիւանդ մարդը կուլտուրական պատկերներ Թիւրքիայից Թարգ. Լ. Բաբայեանի 30 կ.
Առակք ծաղկաքաղք և ինքնագիրք Հ. Բ. վ. Քուչներեանի, 1 ր. 25 կ.
Պատեր համար, Շիրվանզադէի, 60 կ.
Եւգինէ. Շիրվանզադէ 50 կ.
Գեղոնի 1905 թ. պատի ծախքով, 4 ր. 50 կ.
Հոգի Հայաստանի բաժանորդագրութիւն, 5 ր.
Արամի պսակը հայ Թիւրքական ընդհարումներից մի պատկեր, 6 կ.
Գումարով գնողներին զեղջ կը լինի։ Նոյն տեղը վաճառվում են հայերէն, ռուսերէն և ամեն տեսակ դասական գրքեր։
Վաճառվում են հետևեալ պատկերները.
Գրիգոր Արծրունի մայիսի 6-ին «Մշակի» աշխատակիցներից (լուսան.) 1 »
Ք. Կարա-Մուրզայի. » 25
Գամառ-Քաթիպայի. 1 »
Խրիմեան Հայրիկ. » 25
Վեհափառ Հայրիկ Օշականում. » 30
Հայ խօսքի ուսուցիչները (404—1904).
Մեսրոպեան տառերի գիւտի 1500 ամեայ յոբելեանի առթիւ 404—1904) 1 50
Ս. Էջմիածին, յիշատակ հազար վեց հարիւր ամեայ յոբելեանի » 25
Միքայէլ Նալբանդեան » 40
Արիստակէս Արքեպիսկոպոս Սեդրակեան առաջնորդ թեմին Հաշտարխանի. » 20
Գամառ-Քաթիպա » 50
Ս. Գրիգոր Լուսաւորիչ 3 »
Հայրապետութիւն հայոց. » 50
Վերադիր վճարով ուղարկվում է միմիայն նրանց՝ որոնք ուղարկում են կանխավճար։
Դիմել՝ Тифлисъ книжный магазинъ «Гуттенбергъ» Г. И. Галустяну. № 4. 1—2

Съ 2-го апрѣля 1906 года будетъ издаваться въ городѣ Тифлисѣ **новая** ежедневная внѣпартійная газета
,,Кавказскія Вѣсти"
По полной программѣ и въ форматѣ большаихъ ежедневныхъ газетъ.
Подписная цѣна:
на годъ 6 руб.; до конца года 4 руб. (можно вносить по 1 руб. въ мѣсяцъ), на 6 мѣсяцевъ 3 руб., на 1 мѣсяцъ 50 коп.
Отдѣльные экземпляры какъ въ Тифлисѣ, такъ и у иногородныхъ по 5 коп.
Подписка и объявленія принимаются: въ редакціи газеты, по Пушкинской ул. (Эриванская площадь), д. Гор. Кред. О-ва, средній этажъ.
Редакторъ-издатель **Ш. А. Давидова.** 1—2

ԲԺԻՇԿ
Լեւոն Օհանջանեան
Մասնագէտ միզային, վեներական, սիֆիլիսի և կաշուի հիւանդութիւնների։ Ընդունում է առաւօտեան 9-ից մինչև 11 ժամը, երեկոյեան 6—9 ժամ.։ Կանանց և երեխաների համար 11—12 ժ.։ Հասցէն անկիւն Գօլովինսկի. պրոսպէկտի և Կադետսկայեա փողոցի, տուն Թամամշեանի։ Մուտքը Կադետսկի փողոցից № 2, (ա. օ.) 119—300

ԲԺՇԿԱՊԵՏ
Մ. Պ. ԶԱԽԱՐԲԷԳԵԱՆ
Ներքին և Ներվային հիւանդութիւնների
Ընդունում է առաւօտեան ժամի 10—12-ը և երեկոյեան ժամը 6—7։ Լերմոնտովսկայա փողոց, տուն № 16։
(ա. օ.) 5—50

ԲԺՇԿԱՊԵՏ Մ. ՄՈՒՐԱԴԵԱՆ
Նախկին օրդինատօր Մոսկվայի համալսարանի կլինիկայի
Վերսկսեց ընդունելութիւնը՝ յատկապէս միզանցքասեռական, սիֆիլիսի և կաշու հիւանդութիւններ ունեցողներին։ Ընդունելութիւնը ամեն օր՝ 10—11 ժամին առաւօտեան և 5—7 ժամին երեկոյեան։ Բուխչեվսկայա փող. № 1. «պօժարնի կօմանդի» դիմացը. տէլէֆօն № 11։ (ա. օ.) 9—20

ԷԼԷԿՏՐՕ-ԲՈՒԺԱԿԱՆ ԿԱԲԻՆԷՏ
Բժիշկ Միխայել Գեդեվանովի
Զգային հիւանդների ընդունելութիւնը Առաւօտեան ժամի 12-ից մինչև 1-ը, Երեկոյեան ժամի 6-ից—7-ը, Կորգանովսկայա փող. № 20 Վերայում. Սեփական տ., տէլէֆօն № 791։ (ա. օ.) 100—105

Շարունակվում է բաժանորդագրութիւն
,,ԿԵԱՆՔ"
Քաղաքական, հասարակական և տնտեսական օրաթերթի՝ որ քաղաքական պայմանների շնորհիւ առ այժմ կը հրատարակվի իբրև՝
շաբաթաթերթ
Բաժանորդագինն է՝ Թիֆլիսում տարեկան 2 ր. 50 կ., դուրսը տարեկան 4 ր.։ Ամսական Թիֆլիսում 20 կ., դուրսը 30 կ.։ Արտասահման 40 կ.։ Հատով Թիֆլիսում 5 կ. դուրսը 7 կ. Բաժանորդագինը կարելի է վճարել մասամբ, մանաւանդ բանւորների և գիւղացիների համար։
Հասցէն՝ Тифлисъ редакція «Кіанкъ», Чавчавадзевская ул. № 4. Արտասահմանից՝ Tiflis «Kiank», Tzchawtzchawadsevskaia № 4.
Խմբագիր հրատարակիչ Բ. Իշխանեան

ԲԺՇԿԱՊԵՏ
Գ. Ա. ՀԱԽՎԵՐԴԵԱՆ
Մասնագէտ միզային, վեներական և սիֆիլիսական հիւանդութիւնների. ընդունում է հիւանդներին ամենայն օր, առաւօտեան 12—1 ժամը, իսկ երեկ. 6-ից մինչև 8-ը։ Կուկիա, Սամեօնովսկի փողոց № 20։
(ու. կ. ե.) 6—20

ԲԺՇԿԱՊԵՏ
Տ. ԳԷՈՐԳ-ԲԷԳԵԱՆ
ԱՉՔԻ ՀԻՒԱՆԴՈՒԹԻՒՆՆԵՐ
Ընդունելութիւն ամեն օր
Առաւօտեան ժամի 9-ից մինչև 12
Երեկոյեան » 5-ից մինչև 7
Վելեամինօկսկայա փողոց № 8։ (ե.ո.)50—100

ԲԺԻՇԿ Ա. ՄԽԻԹԱՐԵԱՆ
Ընդունում է մասնաւորապէս սիֆիլիս, միզային, վեներական և մորթու ախտ ունեցող հիւանդներին ամենայն օր, առաւ. 12—2 ժ. և 6—8 երեկ. Սօլօլակ, անկիւն Բեբուտովսկի և Պասկեվիչա փող. № 33/15 տ. Միրիմանեանի (նախկին օրիորդաց 3-դ գիմնազ. տուն)։
(ա. օ.) 61—100

ԱՌԱՋԻԿԱՅ ԶԱՏԿԻ
տօներին պարգևելու համար կենտրօնական գրավաճառանոցումը պատրաստուած են ամեն հասակի և ճաշակի յարմար հայերէն, ռուսերէն և գերմաներէն գրքեր։ Նոյն տեղը վաճառվում են և «Полярная Звѣзда» հանդէսի համարները իւրաքանչիւրը 15 կ.։ 6—6

Լոյս տեսաւ
ՅԱՐՈՒԹԻՒՆ ԵՍԱՅԵԱՆԻ
,,Միհրանոյի դագաղում"
Բ. հրատ. Պատկեր Բագուի կոտորածից։ Զոհերի 2 նկարով։ Գինը 7 կ. Դիմել՝ Թիֆլիս «Գուտտենբերգ» գրավաճառանոցը կամ հեղինակին, Հալաբար, Լազարևսկայեա, № 49։ Գումարով գնողներին զեղջ 20—25%։ 100-ից պակաս և առանց կանխավճարի հեղինակն չը դիմել։ 1—2

ԱՅՑԵՏՈՄՍԵՐ
100 հատը 15 րօպէում
ՏՊԱԳՐՈՒՄ ԵՆ
Ս. Յ. Մառինեանցի խանութում, Միքայէլեան կամուրջի վրա։ (հ.ու.) 1—2

ԵՐԿԱԹՈՒՂԻ

(Ժամերը հաշւած են Պետերբուրգի ժամանակով, իսկ փակագծերի միջինը Թիֆլիսի ժամանակով).

	Փոստային	Մարդատար.	Արագ.	Ապրանք.
Բագուից դուրս գալը	4 ժ. 53 ր. ցեր.	11 ժ. 03 ր. ցեր.	12 ժ. 20 ր. գիշ.	4 ժ. 03 ր. գիշ.
Թիֆլիս հասնելը	11 » 10 » »	5 ժ. 31 ր. առ.	1 ժ. 30 ր. ցեր.	9 ժ. 30 ր. գիշ.
Թիֆլիսից դուրս գնալը	11 » 55 » »	6 ժ. 07 ր. առ.	—	—
(Թիֆլիսի ժամանակով)	12 » 53 » »	7 ժ. 05 ր. առ.	—	—
Բաթում հասնելը	1 » 14 ր. գիշ.	7 ժ. 07 ր. եր.	—	—
Բաթումից դուրս գալը	5 » 15 » »	5 ժ. 24 ր. ցեր.	—	—
Թիֆլիս հասնելը	6 » 11 ր. եր.	6 ժ. 44 ր. առ.	—	—
Թիֆլիսից դուրս գալը	6 » 58 » »	7 ժ. 48 ր. առ.	5 ժ. 35 ր. ցեր.	10 ժ. 40 ր. գիշ.
(Թիֆլիսի ժամանակով)	7 » 56 » »	8 ժ. 46 ր. առ.	6 ժ. 33 ր. ցեր.	11 ժ. 38 ր. գիշ.
Բագու հասնելը	1 » 20 ր. ցեր.	12 ժ. 42 ր. գիշ.	6 ժ. 19 ր. առ.	3 ժ. 55 ր. ցեր.
Երևանից դուրս գալը	12 » 02 » »	—	—	11 ժ. 26 ր. գիշ.
Կարսից »	3 » 57 » »	—	—	3 ժ. 1է ր. գիշ.
Ալէքսանդրօպօլից դուրս գալը	7 » 38 » եր.	—	—	7 ժ. 06 ր. առ.
Թիֆլիս հասնելը	5 » 10 » առ.	—	—	4 ժ. 48 ր. ցեր.
Թիֆլիսից դուրս գալը	11 » 22 » գիշ.	—	—	1 ժ. 13 ր. ցեր.
(Թիֆլիսի ժամանակով)	12 » 20 » »	—	—	2 ժ. 11 ր. ցեր.
Ալէքսանդրօպօլից դուրս գալը	10 » 15 » առ.	—	—	12 ժ. 50 ր. գիշ.
Կարս հասնելը	1 » 55 » ցեր.	—	—	4 ժ. 24 ր. գիշ.
Երևան հասնելը	4 » 21 » »	—	—	6 ժ. 48 ր. առ.


ԻՆՔՆԱՇԱՐԺ ԺԱՄԱՑՈՅՑՆԵՐ

Ցանկանալով իւրաքանչիւրին հնարաւորութիւն տալ էժան գնով ձեռք բերելու ճիշտ ամուր գրպանի ժամացոյց, մենք առաջարկում ենք նոր կատարելագործված սև պողպատէ գրպանի ժամացոյց «Ալյոմատ» ժամաշրջանակով, որի վրա նկարված է հարաւային տիպի կանացի դէմք, ինքնաշարժ աչքերով։ Ստանալով այդ ժամացոյցների եզակի վաճառք ամբողջ Ռուսաստանում, մենք շատ տարածելու նպատակով, իւրաքանչիւրի համար մատչելի գին նշանակեցինք. այդ ժամացոյցների գինը ամերիկեան ոսկոյ շինած շղթայով և ճանապարհածախսով Ռուսաստան—միայն 4 րուբլի 50 կոպէկ։ Ամեն մի ժամացոյց նախ քան ուղարկելը, ուշադրութեամբ ստուգում են և 8 տարով հրաշխաւորութիւն ենք տալիս։ Պահանջները կատարվում են իսկոյն վերադիր վճարով. Նախավճար չի պահանջվում։
Պահանջները խնդրում ենք ուղղել. Въ Базаръ Новостей Варшава, Грибная площадь, № 6. Թղթակցութիւնները ռուսերէն լեզուով։ 2—3

ОТЪ ГЛАВНОЙ КОНТОРЫ ГАЗЕТЫ
,,ВѢКЪ"
Въ виду пріостановки, постановленіемъ Московской судебной палаты, газеты **«Вѣкъ»** впредь до судебнаго приговора, редакція **«Вѣка»** вошла въ соглашеніе объ удовлетвореніи подписчиковъ съ конторой выходящей въ гор. Москвѣ съ 18-го Марта с. г. газеты
«СОВРЕМЕННИКЪ»
Девизъ газеты—прогрессивное развитіе общественныхъ силъ на основѣ конституціонной свободы.
Въ **«Современникѣ»** принимаютъ участіе: В. А. Анзимировъ, А. В. Амфитеаровъ, М. П. Авсаркисовъ, Ю. И. Айхенвальдъ, С. Б. Айзенманъ, Ю. К. Арнольдъ, Н. Н. Баженовъ, А. П. Барановъ, прив. доц. М. П. Бобинъ, прив. доц. М. М. Богословскій, Ю. А. Бунинъ, Б. С. Боднарскій, П. П. Булыгинъ, В. П. Вахтеровъ, профес. А. Н. Веселовскій, Ю. А. Веселовскій, прив. доц. Д. В. Викторовъ, проф. Л. Е. Владиміровъ, доц. А. Э. Вормсъ, О. Волжанинъ, Б. П. Вышеславцевъ, прив. доц. А. Н. Гренъ, В. В. Гофманъ, В. А. Гольцевъ, В. П. Гайдебуровъ, А. Б. Гольденвейзеръ, Осипъ Дымовъ, Г. Г. Евангуловъ, Д. Н. Егоровъ, прив. доц. А. А. Кизеветтеръ, С. Г. Кара-Мурза, проф. М. М. Ковалевскій, прив. доц. Ѳ. Ѳ. Кокошкинъ, П. С. Коганъ, прив. доц. С. А. Котляревскій, Н. А. Крашепинниковъ, А. И. Купринъ, А. Р. Ледницкій, Н. Н. Львовъ, В. А. Маклаковъ, Максъ-Ли, С. Г. Мамиконянъ, проф. А. А. Мануиловъ, С. П. Мельгуновъ, А. Н. Нерсесовъ, М. И. Назаревскій, проф. П. И. Новгородцевъ, С. Д. Протопоповъ, С. Л. Поляковъ, А. А. Рождественскій, А. А. Радцигъ, прив. доц. П. Н. Сакулинъ, Б. А. Садовскій, И. Н. Сахаровъ, М. П. Свободинъ, А. Серафимовичъ, прив. доц. Е. Д. Синицкій, Н. А. Скворцовъ, прив. доц. Б. И. Сыромятниковъ, А. С. Скляръ, В. Н. Сторожевъ, А. А. Тимофеевъ, Н. И. Тимковскій, Н. Д. Телешовъ, Ѳ. О. Тищенко, П. Д. Успенскій, И. А. Ушаковъ, профес. А. Ѳ. Фортунатовъ, доц. М. И. Фридманъ, доц. А. С. Хахановъ, П. В. Чеховъ, М. Г. Шмелькинъ, А. А. Яблоновскій, прив. доц. А. С. Ященко и др.
«Современникъ» имѣетъ собственныхъ корреспондентовъ во всѣхъ крупныхъ заграничныхъ центрахъ.
Условія подписки на «СОВРЕМЕННИКЪ»
Съ 1-го Апрѣля: по 1 Мая 80 коп., по 1 Іюня 1 руб. 55 коп., по 1 Іюля 2 р. 30 к., по 1 Августъ 3 р., по 1 Сентября 3 р. 70 к., по 1 Октября 4 р. 50 к., по 1 Ноября 5 р. 20 к., по 1 Декабря 5 р. 90 к., по 1 Января 6 р. 50 к.
Всѣ подписавшіеся на **«Современникъ»**, получаютъ газету со дня выхода до 1 апрѣля **безплатно.** Для г.г. студентовъ и сельскихъ учителей въ мѣсяцъ 60 к.
Подписка принимается въ конторѣ редакціи:
Москва, Столешниковъ пер., д. О-ва «Якорь», 31. Телефонъ 122-70.
у Н. Н. Печковской (Петровскія линіи)
и во всѣхъ крупныхъ книжныхъ магазинахъ Москвы и Петербурга.
2—3

Տպարան «ՀԵՐՄԷՍ» ընկ.
Электропечатня типографскаго Т—ва Гермесъ, Мад. ул. № 15